Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1350

613.9
7-17

12.002

2010

ԼԱՊՏԵՐ
ԾՆՈՂԱՑ

(6)

ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆԳ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՖԵԱՆ

1874

613.9
Դ-17

613.9
Պ-17

ԾԱՌԱՅԱԲԱՆ

Ինչպես որ ընտանեաց ամեն մի անդամի սրբազան պարտքն է բոլոր կարողութեամբ ջանալ եւ գործել նորա զարգացման եւ բարեշատութեան համար, եւ ինչպես որ ամեն մարդ, մարդկային ցեղին մի անդամ լինելով, պարտքի տակ է նորա բարոյականը օժանդակել, նոյնպես ալ ամեն մի ազգի անհատ իրեն յատուկ ազգին մի անդամ լինելով պարտաւորեալ է ըստ իր կարողութեան եւ յարմարութեան նորա բարգաւաճմանը համար աշխատիլ: Այդն սրբազան պարտքն վճարելոյ համար միւն այս եւ միւն այն նպատակին կը ծառայէ: Ազգիս ծառայելու համար մեր նպատակը եւ սորա համար գործածած միջոցն միանգամ ցարդ հրատարակած գրքոյկներիս տեսնուեցան: Այժմ մի եւ նոյն նպատակաւ սոյն նոր հրատարակութիւնս ի լոյս ընծայելով Հայկազն ազգուազարմ Ծնողաց գործածութեանը կը նուիրեմ: Կը մաղթեմ որ նա ճշմարիտ Լապտեր մի լինի եւ ամուսնական կենաց մէջ ծնողաց շատ հեղ անցնել պարտաւորած մութ եւ խաւար ճանապարհներն լուսաւորելով հոն գտնուած վտանգաւոր գահավիժներին եւ կենաց կատաղի թշնամիներին զանոնք զերծ եւ ազատ պահելով կենաց խաղաղ վախճանին առաջնորդէ:

24 Մայիս 1874

Խմբագիր.

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ԼԱՊՏԵՐ
ԾՆՈՂԱՑ

ԳԼՈՒԽ Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամեն գործարանաւոր մարմին, այն է, մարդ, բուսեղէն և կենդանի, կենաց տեւողութեան որոշ սահման մ'ունի, ուսկից անհնար է անդին անցնիլ. սոյն շրջանակին արտաքին կողմն մահուան իշխանին իրաւասութեան ներքեւ է. կեանքը հոն կաւարտի. հոն հողը վերստին հողի փոխուի, և հոգին Աստուծոյ վերադառնայ։ Այս է բնութեան անփոփոխելի օրինաց մին. որով կենաց անցաւորութիւնը ամեն մարմնոյ բաժինն ու վախճանն է եղած. և թէ և ոմանց՝ համար կեանքը կարճ և այլոց համար ալ նորա տեւողութիւնը խիստ երկար կրնայ ըլլալ, սակայն եթէ նա հազարաւոր դարեր եւս տեւելու լինի անցաւոր է։ Տե՛ս այն փոքրիկ ճճին. նա այս առաւօտ առաջի անգամ արեգական լոյսն տեսաւ. թո՛ղ զանի առանձին մինչեւ որ արեգակը միջօրէին վրայէն երկրիս բնակչացն կէս օրուան նշանը տայ. այժմ այն ջնջին ճճին երիտասարդու-

ՀԱՍՈՒ-Ազգ ՍՍՌ

39566-67

52141-4-2

թեան առոյգ հասակին ժամանած է և կենաց հաճոյքներն լիովին կը վայելէ։ Իսկ երբ արեգակը իր վերջին մնաք բարեաւն աշխարհիս մատուցանէ, յայնժամ մի և նոյն ճճին ծերացած և իր երկար կեանքէն ձանձրացած գերեզման մըտնէ։ Ասի լոկ մի օր տեւող կեանք է. սակայն կեանք ալ կայ որ տարիներ և դարեր կը տեւէ, բայց և այնպէս հոս ալ մահն այնքան որոշ է ինչպէս միօրեայ կենաց մէջ, և երբ սահմանեալ վայրկեանը զարնէ, յայնժամ հրեշտակն մահուան յերկնից սլանալով կենաց այն թանկագին աւանդն վերստին ետ կը պահանջէ։ Ա.յս է այն անվրիպելի ճակատագիրը, զոր բնութիւնը համայն գործարանաւոր մարմնոց վրայ դրոշմած է։

Կենաց տեւողութիւնը ոչքան ալ համառօտ լինի՝ տակաւին ամեն գործարանաւոր մարմին իր մէջը զօրութիւն մը և ընդունակութիւն մը կը կրէ իրեն նման այլ էութիւն մ՚արտադրելու։ Աշխարհիս վրայ իրեն նման գոյութիւն բազմացնելոյ կարողութիւն է այս։ Ա.րտադրման սոյն զօրութիւնը կենաց մասնաւոր մի պարբերութիւնէ է կախեալ, որ ոչքան մարմնոյ ցեղը զանազանի նա ալ այնքան կը տարբերի։ Ա.յս պարբերութեանը արտաքոյ կ՚ըսուի։ Ա.րփունքի հասած որ և է կենդանի կոկսի իր տեսակին նման այլ էակներ արտադրելը աղձալ։ Ոմանք մի քանի աւուր կամ շաբաթուց մէջ անթիւ և անհամար սերնդոց հայր լինին, քանի որ այլք իրենց տեսակէն մի հատ արտադրելոյ համար մի քանի ամսոյ կամ

տարուոյ կարօտ են։ Մինչդեռ փիղը 3 կամ 4 տարուան մէջ մէկ ձագ կունենայ, որդը մի տարուան միջոցին մէկ միլիոնի մօտ ձուկ ածէ։ Տեսակ մը միջատ կայ որ մի քանի շաբաթուց մէջ մի քանի հազար միլիոն հաւկիթ կածէ, իսկ ֆուրնէլ կոչուածը 4 աւուր մէջ 140 երկիլեօն հաւկիթ կածէ։ Ա.յսու ամենայնիւ որ և է նոր էակի մը գոյացումը ուրէն գոյ եղող կեանքէ մ՚է կախեալ, զի առանց սեռական գործողութեանց, լոկ նիւթոց քիմիական կապակցութեամբը, (Generatio aequivoca) կենաց գոյանալը ոչ թէ միայն անկարելի, այլ անտեղի, ջնջին, սնոտի, յիմար և ծաղրելի երեւակայութիւն մ՚է։ Ամեն գործարանաւոր մարմին ուղղ մը կոկսի. առանց սերման անհնար է որ բոյս մ՚գոյանայ. (omne vivnm ex ovo, ովնայն կենդանի 'է յոյս)։ Սոյն վարդապետութիւնը լուսաւորեալ աշխարհաց համայն ուղղափառ բնազիններէն ընդունուած է։

Ա.րդ այս հիման վրայ հաստատ կանգնելով յայտնի է որ արտադրիչ զօրութիւնը մարմնոյ մէջ անկարելի է որ զարթնու մինչև որ յոյն և սերմ իր կատարելութեանը չհասնի. ասի երբ կատարուի մարմինն ալ արփունքի ժամանած համարուի։ Մարդկային ազգին համար արփունքն կենաց 14ր կամ 18ր տարին սկսի. սակայն սոյն թուականը կրնայ յետս կամ յառաջ մղուիլ ըստ կլիմայի, կենցաղավարութեան և այլ պարագայից։ Ա.յս պարբերութիւնը արտադրական զօրութեանց աւարտումը չէ, այլ այժմ կսկսին նոքա զարգանալ և զօրանալ մինչեւ որ կանանց

մէջ նոյն կարողութիւնը կենաց 45ը կամ 50ը տարեայն, իսկ արանց մէջ 60ը ին շիջանի նորէն։

Արդ նոր էակի մը գոյացումը, մարդկանց և աղնուագոյն կենդանեաց մէջ, հետեւեալ չորս գործողութիւններէն կախեալ է. ասոնք են.

1. Արգասաւոր.

Արուն և էգն, զատ զատ արտադրիչ զօրութեանց պահարաններն գոլով, իրենց մէջ առանձին կրած սոյն կարողութիւնն միացնելով անկախ, ազատ և նոր կենաց նախնական գրգիռն կուտան։ Սորա տեղի ունենալուն պայմանն է որ կատարեալապէս կազմակերպեալ արական սերման Սերմնորդք (Պատկեր Ա.) կատարեալապէս կազմակերպեալ իգական ձուերուն վրայ ներգործեն, այնպէս որ սերմնորդք ոչ թէ լոկ ձուերը չոշափեն, այլ նոցա խորն թափանցեն։ Արգասումը ոչ թէ լոկ ձուին այլ ամբողջ իգական մարմնոյ վրայ փոփոխութիւններ յառաջ կը բերէ, զորս յետոյ տեսնենք պիտի։

2. Տեղափոխում.

Արգասումէն ետքը ձուն ձուարարներէն զատուելով այլ տեղ մի փոխադրուի որ հոն նոր գոյանալի էակն կազմակերպի։ Մարդկանց մէջ ձուն արգասումէն 8 կամ 14 օր յետոյ ձուարարներէն անջատուելով և ձուանցքներէն անցնելով խարիսխին վրայ զետեղեալ արգանդին մէջ (Պատկեր Բ. Գ.) կը փոխադրի։

3. Կազմակերպութիւն.

Արգանդին մէջ տեղափոխեալ արգասաւորեալ մարդկային ձուն 9 արեգական կամ 10 լուսնոյ ամիս կամ 40 շաբաթ և կամ 280 օր համբերելով ամենայնիւ կազմակերպի և մարդկային մարմնոյ փոխուի։

4. Ծնունդ.

Կատարեալապէս կազմակերպեալ էակը այժմ մայրական մարմնէն անջատի և աշխարհ գալով անկախ էութիւն մը ձեւանայ։ Արգանդն ձրգտելով ծննդեան ցաւերն սկսին, երախան շրջապատող մաշկեայ քօղը պատռելով մանուկը 280 օր առաջ արգասաւորեալ ձուէն դուրս ելլէ ճիշդ ինչպէս վառեակն հաւկթին կճեպէն դուրս ելլէ։

Ասոնք են ահա նոր էակի մը գոյանալուն տեղի ունեցած գործողութիւնք որոնց վրայ այժմ կարդաւ պիտի խօսինք։

ԳԼՈՒԽ Բ.

ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Ինչպէս որ երկրագործը չկրնար ամէն տեսակ երկրի վրայ իր հունտերն ցանել, առանց նախ քննելոյ և վստահանալոյ թէ արդեօք հողն իր ակնկալութիւնքը պտղով պիտի պսակէ՞, այնպէս ալ մարդկային մարմինը, եթէ իրեն նման նոր էակի մը գոյութիւն պիտի պարգեւէ, չը կրնար սոյն ակնկալութիւնը արդիւնաւոր կերպիւ պսակել, եթէ պահանջեալ յատկութիւններէն զուրկ է, այլ երկրագործական նպատակի անյարմար հողին մէջ սերմանեալ հունտին նման կամ ամենայն աշխատանք և ակնկալութիւնք ի թերեւ կը հանէ և կամ թերի արդիւնք յառաջ բերելոյ պատճառ լինի։ Այն կինը, որ անթերի և անարատ մանկիկի մը մայր լինելկանկալէ, պէտք է գալած ու կանգնած տեղն մարմինն ու գլուխն ուղիղ դիրքի մէջ պահէ. վիզը, կուրծքն, որովայնը և սրունքներն բնական ձեւէն շեղած և տձեւացած լինելու չեն, և ամենայն անդամք կատարելապէս զարգացած ըլլալու են, կամ, որ նոյնն է, նա պարտի արփունքի հասած ըլլալ։

Արդ արփունքի հասած կնոջ մարմինը առն մարմնէն խիստ կը տարբերի։ Նորա ամենն մասունք արական մարմնէն փոքր են։ Անոր ամենէն լայն մասը մէջքերուն քով է, և ամենանեղ

ման ուսերն է։ Այս պատճառաւ կանանց որովայնը լայն իսկ կուրծքին արկղը նեղ է, ուր նաեւ փոքր թոքեր շնչառութեան պաշտօնն կը վարեն։ Նաեւ կանանց աղիքներն սնուցիչ նիւթն առատագոյն կարտադրեն որ ծննդական արարից, մանաւանդ գոյացեալ էակին սննդեանը համար խիստ հարկաւոր է։ Այս ամենը թէ և արական մարմինը իգականէն խիստ կը տարբերեն, սակայն էական զանազանութիւնը ծնընդական գործարանաց մէջ կը կայանայ։ Ծնընդեան իգական գործարանաց եռեակ կարգը, երկու ձուարաքք, արգանդը և նորա անցքերն և ստինք արականը իգականէն կանջատեն, և կընոջ արտադրական պաշտօնը երկարատեւ և դժուարագոյն կընեն քան թէ արանցը։

Այսպէս այրն և կինն տարբեր կազմակերպութիւն ունենալով երկու զատ զատ կէսեր կը ձեւացնեն և միայն ամուսնական միութեամբ սոյն երկու կէսերն անթերի ամբողջութիւն մը կազմելով լինին «մի մարմին»։ Այս պատճառաւ է որ մի սեռն միւսէն է կախեալ, զի նոր էակի մը գոյանալու մասին այրն ինչպէս նաև կինն զատ զատ առնելով անկարող են և ոչինչ. իսկ երբ այս երկու անջատեալ մասունք ի մի ձուլուին բնութեան ամենավեհ սքանչելիքն կը կատարեն, զի «միութիւնը զօրութիւն է»։

Սոյն սքանչելեաց կատարման առթիւ կինը դժուարագոյն և կարեւորագոյն դեր մի կատարէ քան թէ այրը. արական սերմը մարմնոյ առանց որ և է անհանգստութեան և նեղութեան

պատճառ լինելոյ ինքնին կը գոյանայ. մերձաւորութիւնը արուն չնեղելէ զատ մասնաւոր ըզգայական հաճոյքով մ'ալ կը վարձատրէ զանի, և եթէ այն բարոյական կապը, այսինքն ամուսնական սէրն, զանի կնոջ հետ չկապէր, յիրաւի նա ոչ կնոջ և ոչ երախային համար փոյթ և հոգ ունենար։ Սակայն կինը յղանալէ ետեւ ծանր վիճակի և պարագայից կը մատնուի. գոյութիւն ստացող էակն օրքան որ արգանդին մէջ աճի, այնքան կը ձգտի որովայնը և ստամոքս, աղիք և միզանօթն ճնշուելով կը գրգռին և ուղեղն իսկ կը բորբոքի։ Յղութեան սոյն ծանր պարբերութիւնը 40 շաբաթ շարունակելէն ետեւ որդեծնութեան յուզեալ օրն կը ժամանէ. ասի բընութեան մարդկան վրայ դրած պարտուց ամենածանրն է. երախան մինչդեռ յաշխարհ փոխադրի ծննդական գործարանաց անցքերն կը վիրաւորին և վէրքերն անհոգութեամբ անբուժելի և վտանգաւոր կրնան լինիլ։ Իսկ յաշխարհ վերածեալ երախան աւելի հոգի և խնամի կարօտի բան ծննդենէ առաջ. ասի մօրն նեղութիւններն կը բազմապատկէ, մանաւանդ աղքատ կանայք այս մասին շատ կը տանջուին, մայրը այժմ պարտաւորի գոնէ 40 շաբաթ սնուցանել զերախայն իր ստինքներովը։ Թողելով այլ պարտքերն որ մայրը մինչեւ մանկին մեծնալն գիշեր և ցերեկ կատարէ, տես թէ արդասումը ի՞նչ երկարատեւ ծանր վիճակի վերածէ զկինը, յորմէ այրն բոլորովին ազատ է։

Ուրիշ տարբերութիւն մ'ալ, որով այրը կը-

նոջմէ զանազանի պարբերական հոսուածն է, որով բնութիւնը հպատակած է ծննդական գործարանաց բուռն գրգիռն մեղմել և արգանդն հանդարտեցնել, առանց որոյ սեռական գրգիռն, անյագելի քաղձի կամ ծարաւի նման, խիստ ձանձրացուցիչ և տաղտկալի պիտի լինէր։ Հոսման քանակութիւնը իր նպատակին վրայ բնաւ ազդեցութիւն չունի, զի նա կանանց կազմութենէն, կենցաղավարութենէն և օդին որպիսութենէն է կախեալ։ Բարեխառն կլիմայից տակ նա առողջ մարմնոց մէջ կենաց 14°. 15°. և կամ 16°. տարեցն կսկսի. ցուրտ կլիմայից տակ այլ եւս ուշ. իսկ ջերմ երկիրներն կենաց 10°. 11°. կամ 12°. տարեցն եւս կսկսի։ Իսկ աշխարհիս ամէն կողմն ալ մասնաւոր պարագայք սոյն հոսման ուշ կամ կանուխ սկսելուն կրնան պատճառ լինել։ Բարեխառն կլիմային տակ նա կենաց 46°. 54°. տարեցն կըվերջանայ, ջերմ տեղերն աւելի ուշ, իսկ ցուրտ երկրաց մէջ այլ եւս կանուխ։ Քաջառողջ մարմնոց համար նա 28 օրն անգամ մը պատահի և 2–8 օր կամ աւելի կրնայ տեւել. սակայն կան կանայք ալ որ ամեն 15 օրն, կամ 3–4 և կամ 5–6 շաբաթն անգամ մը սոյն հոսուածն կունենան. ասոնք զարուեղութիւնք են և աւելի դիւրազգած կանանց պատահին։ Ջերմ երկիրներու մէջ լուսնոյ փոփոխութիւնք սորա վրայ մեծ ազդեցութիւն ունին. Քուսպա կղզւոյն վրայ իգական սեռին $^4/_5$ մասը լուսնոյ լման միջոցին կամ անկից քիչ մ'առաջ սոյն հոսուածն կու-

նենայ։ Ցղութեան միջոցին արգանդին արիւնը գոյանալի էակին սնդեանը և կազմակերպութեանը գործածուելով պարբերականը սովորաբար կը դադրի. սակայն հոս ալ բացառութիւն կայ։

Հինները պարբերականը, ինչպէս նաև յղութիւնը և որդեծնութիւնը, հիւանդութիւն սեպելով, սոյն վիճակաց մէջ գտնուողներուն դեղեր կուտային, որոնց գրգռիչ բնութեամբը նոքա յիրաւի հիւանդութեանց ենթարկուէին։ Սակայն ասոնց և ոչ մին հիւանդութիւն է. այլ նշան և պայման առողջութեան։ Այսու ամենայնիւ կան քանի մի կանոնք զորոնք նկատելով բազում անհաճոյ հետեւանքներէ ազատ լինին։ Ուտելիք, խմելիք և կենցաղավարութիւն պէտք է լաւ նկատողութեան առնուին, որպէսզի հոման նպատակն, որ է մեղմացուցմն գրգռանաց ծննդական գործարանաց և անդորրութիւն արգանդի, չխանգարի։ Ուստի պարբերականէն քիչ առաջ և բոլոր տեւողութեանը մէջ մարմնային և մտային բուռն աշխատանքներէ խուսաբերելով մարմինը ամենայնիւ առողջ պահելու է։ Զափազանց ցուրտն, տաքը, վախ, երկիւղ, կիրք, հոգ, սրտմտութիւն, նախանձ, սուտ սէր, ամեն ասոնք արգանդին հոսումը կը ցամաքեցնեն։ Շռայլ կեր ու խում և մարմնական բուռն գրգռմունք զանց պէտք է առնել. սոյն օրերն լաւ է հանդարտ, զուարթ, և կայտառ կերպով անցնել և մարմինը չհոգնեցնող զբաղումով պարապիլ։

Պարբերականին դադրելէն ետեւ օգտակար է ծով մտնելն կամ պաղ լուացումներ ընել, իսկ նորա տեւողութեան միջոցին միայն քաղջ ջրով պէտք է լուացուիլ։

ԳԼՈՒԽ Գ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԵՐԱԽԱՅԻ

Արարիչ հրեշտակը երբ յերկնից սլանալով դեռափթիթ կնոջ մը մեռենայ և Աստուածային հրովարտակաւ մը զանի մարդկութեան ձուլարանի՛մը փառացն արժանացնէ, յայնժամ և նոյն վայրկենէն նորա արգանդին մէջ նոր կեանք մը գոյանալով անկախ էակ մը կազմակերպուիլ կսկսի, սակայն առաջի երկու շաբաթուց մէջ սոյն ձուլարանին վրայ գաղանեաց քողն տարածեալ լինելով մարդկային հետազօտութիւնք երրորդ շաբաթէն կսկսին։

1°. Ամիս կամ 1°. 4°. շաբաթ։

Թխագոյն և կիսով չափ թափանցիկ սաղմը 2–3 գիծ մեծութիւն ունի, գլխուն կողմը կլոր է և մարմինէն ասով կը զանազանի. մարմինը պոչի նման կը վերջանայ։ Զիզին մասն ձևացնող կողման վրայ չորս չորս ծակեր կան որոնք կոկորդին մէջ կը բացուին։ Թերակազմ սիրտը միայն շարժիլ կսկսի, որովայնին մասը ճեղքուած

է, ուսկից մաղի նման թելերը ձգուելով արգանդէն սնունդ կը քաշեն, նման բուսոց արմատներուն՝ որք հողէն սնունդ ժողուեն և ծառին այլ և այլ մասանցը հաղորդեն։ Արգանդէն ալ այսպիսի թելեր բուսնելով ասոնք արգասաւորեալ ձուէն կախեալ թելերուն հետ կը միանան և պորտին լարն և սաղմընկերն կը կազմեն, որոնք արեան սննդարար մասունք գատելով սաղմը կը սնուցանեն։ Այս սնունդն թթուածին կազով լի ըլլալով, սաղմը օդի կարօտ չլինիր։

2°. Ամիս կամ 5°–9° շաբաթ (Պատկեր Դ.)։

Սաղմը 4–15 գիծ լինի. ոսկորներն կազմակերպիլ սկսին և նախնական ջիղերով և երակներով կը ծածկուին. գլուխը բոլոր սաղմին կէսին չափ լինի. դէմքը և գդայարանք կը կազմակերպուին. աչքերն սեւ կէտերու նմանին. քթին ծակերն խոռոչներ են միայն, ականջներն փոսեր, բերանը լայն ճեղք մը, որոյ մէջ տեղը լեզուն փոքր ինչ բարձրացած կը նշմարուի։ Վիզը խիստ կարճ է, մարմնոյ ծածկոյթն բարակ է, սիրտն, թոքը և լեարդը որոշ կը տեսնուին։ Թեւ և սրունք, հանդերձ մատերու նախագիծներով երեւալ սկսին։ Սաղմը ջրոյ մէջ գըլխիվայր լող կուտայ, զի գլուխը բոլոր մարմնոյ ամենածանը մասն կը կազմէ. ոսկորներն կարծրանալ կսկսին։

3°. Ամիս կամ 9°–13° շաբաթ։

Սաղմը այժմ 2–2½ մատնաչափ երկայն և 8 տրամ ծանր լինի, այս ամսուն մէջ այլ որ և է ամիսներէ աւելի արտաքին փոփոխութիւնք տե-

ղի կունենան։ Պորտին լարն կազմուելով այժմ սաղմը ուղղակի սոյն լարին միջոցաւ մօրն արիւնէն սնունդ կընդունի, մինչդեռ նա յառաջագոյն ձուէն կը սնանէր։ Սոյն ամսուան մէջ մինչև իսկ մանկին սեռն կրնայ որոշուիլ։ Արեան մէջէն սնունդը այժմ առատապէս և ուղղակի սաղմին հաղորդուելով նախընթաց ամսոց մէջ յատակագրծեալ գործարանք կատարելութիւն կըստանան։

4° Ամիս կամ 13° — 17° Շաբաթ։

Սաղմը 4—5 մատնաչափ մեծ և 40 տրամ ծանր լինի. մարթը վարդագոյն կըլլայ. գլուխը նուրբ մազերով ծածկուիլ կսկսի. դէմքը կերկարի և մարդկային կերպարանք կառնէ, քանի որ յառաջագոյն ամենայնիւ անասնական տեսք մը ունէր։

5° Ամիս կամ 17°—21° Շաբաթ։

Սաղմը այժմ 9—12 մատնաչափ մեծ և 64—88 տրամ կը կշռէ։ Թառամեալ մարթը անթափանց լինի. գլխուն մազերն կաճին և այլ տեղեր մազ կերևան։ Եղունգ աճիլ կ'սկսին. աղիք երակայական աղբով կը լեցուին։

6° Ամիս կամ 21°—25° Շաբաթ։

Մեծութիւնն է 12—14 մատնաչափ և ծանրութիւնը 225—300 տրամ։ Նա դեռ արգանդին ջրին մէջ կը լողա և առաջին շարժումներն կընէ եթէ այժմ ծնելու լինի կրնայ շունչ առնել, ձայն հանել և քիչ մը ատեն շարժիլ, սակայն շուտով կը մեռնի։ Գլուխը դեռ շատ մեծ է և աչաց բիբը քօղարկեալ։

ՀՍՍՌ-Ազգ ԳԳՐ

7° Ամիս կամ 25° — 29° Շաբաթ (Պատ. Ե)։

Ծանրութիւնն է 300—450 տրամ և մեծութիւնը 14—15 մատնաչափ։ Այս ամսուն մէջ ծնողն կրնայ երբեմն ապրիլ։ Մորթը կարմիր է. բոլոր մարմինը դիրնալով կլոր ձեւ մ'է առած, մազերն կը թխանան եւ կերկարին։ Այժմ նա չէ կարող այլ եւս աղատօրէն արգանդին ջրին մէջ լողալ, զի իր բնակարանը իրեն համար փոքր է, ուստի կը պարտաւորի կծկիլ։

8° Ամիս կամ 29°—33° Շաբաթ։

Մանկիկը 14—15 մատնաչափ մեծ եւ 450—600 տրամ ծանր լինի, նաեւ աչքերն ծածկող քողը անհետանալով այժմ աղատ կը տեսնէ։

9° Ամիս կամ 33°—37° Շաբաթ։

Ծանրութիւնը 750—900 տրամ եւ մեծութիւնը 17 մատնաչափի կը հասնի։

10° Ամիս կամ 37° – 40° շաբաթ։

Մանկիկը 18 մատնաչափ մեծ ու 2 ½ օգա ծանր լինի. բրդինման մազերն թափին, մորթը ուղղիկ, զօրաւոր և սպիտակագոյն կարմիր լինի. գլխի մազերն կերկարին, եղունգ կը կարծրանան, ականջին կազմուածքը կը զօրանայ, աղիք աղբով, մաղձին մաշկը մաղձով և միզանօթը մէզով կը լեցուի։

Արգանդին մէջ երախային կազմակերպուելուն ստորագրութիւնը աւարտելէ առաջ քանի մի այլ դիտողութիւններ պէտք է ընենք։

Կանոնաւոր յղութեան մէջ երախայն արգանդին մէջ գլխիվայր կեցած է. երեսը և փորը կողմնակի յաջ դարձած և կրնակը ի ձախ. թուշը կուրծքին վրայ ճնշեալ է. սրունք՝ ծունկերովն հանդերձ որովայնին վրայ են քաշուած. իսկ թեւերն կամ կուրծքին վրայ խաչաձեւ ծալուած են և կամ ձեռքերով դէմքը կը ծածկեն։ (Պատկ. Զ.)։

Արգանդին մէջ եղած շարժումը յղութեան երրորդ շաբաթուն մէջ երախային սրտին ցատկող բախումներէն է. սակայն արեան շրջանը սկսելէ ետեւ եթէ յղի կնոջ որովայնին վրայ ականջ դնենք սրտի կանոնաւոր բաբախմանց ձայնը կը լսուի. յայնժամ բոլոր մարմինը աստ և անդ կը տարուբերի և թեւերն կամ սրունքներն շարժիլ կսկսին։

Կատարելապէս կազմակերպեալ երախային մեծութիւնը 19—22 մատնաչափ, իսկ ծանրութիւնը 900—1000 տրամ կամ էն շատը 3 օգա լինի։ Այսպիսի կատարելակազմ մանկին մարմինը լեցուն, զօրեղ ու ներդաշնակ կըլլայ. անդամք կլոր, մորթը ճերմակի մօտ կարմրագոյն և ողորկ է. բրդանման մազերն մեծաւ մասամբ թափած կը լինին. գանկին ոսկորներուն եզերքներն միմեանց մօտ են. այլ եւս երեսներն թարշամեալ չեն. գլխուն մազերն ըստ բաւականին երկայն լինին. յօնքերուն և աչաց մազերն ցցեալ, եղունգ կարծր ու ականջք հաստատուն կըլլան։

Իսկ թերակազմ մանկին մեծութիւնը 18 մատնաչափ և ծանրութիւնը 750 տրամ լինի։ մարմինը նիհար և թարշամեալ, մորթը թառամեալ և կարմիր, ոտաց և ձեռաց տակը կապ-

տագոյն և գլուխը բրդանման մազերով ծածկեալ լինի։ Գանկին ոսկորներն միմիանցմէ հեռու և շարժուն են, երեսը ծեր մարդու դէմքի նմանի. գլխուն մազերն կարճ, կակուղ և սպիտակագոյն լինին, յօնքերուն և աչաց մազերը բրդի նման են, իսկ եղունք և ականջներն կակուղ։

ԳԼՈՒԽ Դ.

ՅՂՈՒԹԻՒՆ

Սաղմը 40 շաբաթ արգանդին մէջ կազմակերպուելով երախայն կը գոյանայ։ Արդ այն մրջիւնի չափ սաղմը մեծնալով և 19–22 մատնաչափ մեծութիւն և 3 օգայի մօտ ծանրութիւն ունեցող էակի մը վերածուելով հարկաւ զանի շրջապատող արգանդն ու որովայնն եւս կընդարձակին և փոփոխութեանց կենդարկին, որով մօր մը բազում դժուարութեանց և անհանգստութեանց առիթ լինին։ Արգասաւորութեան ապրքէն սկսեալ իգական մարմինը շարունակ ըզբաղեալ է վասն կազմակերպութեան և ծննդեան երախայի։ Այն միջոցին արգանդին կրած զանազան փոփոխութիւններն այժմ պիտի յիշենք։

Զու կոչեալ փոքրիկ փամփշտիկ մը արական սերմէն ազդուելով կսկսի երախային մարմինը գոյութեան բերել, որ կանոնաւոր յղութենէ

մը յետոյ $2^1/_2$–3 օգա կշռէ և 19–22 մատնաչափ մեծ լինի։

Երախային մարմինը ո՛րքան զարգանայ և ծաւալի ա՛յնքան ընդարձակի նաև նորա բնակարանն և կազմաւորեղին եղող մայրական արգանդը, մինչեւ որ 40 շաբթուան մէջ երախային կազմակերպութիւնը աւարտեալ լինելով մայրական արգանդն և որովայնն ալ ամենէն աւելի ծաւալեալ լինի։ Հոս, արգանդին մէջ, յղութեան միջոցին երախայական մարմնոյ կազմակերպութեան հարկաւոր ամեն պէտք եղածն կը գտնուի. սոնդեան համար կաթի նման հիւթ մը, կենսապահ օդ և ջերմութիւն, ամենն ալ արգանդը առատապէս մատակարարէ անոր։ Նա և արգանդը այնպէս կազմուած է որ յղութեան միջոցին նորա պատերն թանձրանալով կազմակերպութեան աւարտումէն զկնի կարողանայ զերախան յաշխարհ ածել։

Արգանդ ընդարձակելով (Պատկ. Է) որովայնն կամարաձեւ դիրքով մը դէպի դուրս ցցուի, որոյ պատճառաւ յղացեալ կինը կանգնած և բաւած ատեն մարմինը դէպ յետս ծռել հարկադրի, որ մի գուցէ ծանրաբեռնեալ որովայնը զինքը յերկիր տապալէ։ Յայնժամ սկսին աղիք, ստամոքս, ջիղեր, երակներ արգանդէն ճնշուիլ. փայծաղն եւս սեղմուելով առատապէս մաղձ արտադրէ. թոքերն և սիրտն կը ճնշուին, որով դժուարաշնչութիւն և կարճաշնչութիւն պատճառի և արիւնը սև գոյն կառնու. ոտաց և սրնքաց երակներն կուռին և թխագոյն նշաններով ծածկուին։

Այն ճնշման պատճառաւ երիկամունք և սովորականէն առատ մէզ կարտադրեն։ Նոյն միջոցին յղացեալն զանազան կերուխումներէ կը գարշի, սիրտն կը խառնուի և կը փոխէ թէև մարսողական կարողութիւնը խանգարեալ չէ. ասի պատահի մանաւանդ առաւօտն կամ ստամքսը պարապ եղած ատեն. այս կամ այն կերակրոյ ջերմ բաղձանք մը զինքը անհանգիստ կընէ։ Այս ամենը 4—5 աւուր մէջ անհետանալով ախորժակն կը բացուի, որով արիւնը և կառատանայ և կը թանձրանայ և նորա սննդարար յատկութիւնը կ'աւելնայ։ Բաց ի տոյանէ յղի կանանց գլուխը կը ծանրանայ և սրունք կը դանդաղանան, ջերմը զանոնք անհանգիստ կընէ, սիրան անտովոր կերպով բաբախել կսկսի. նոցա քունը անհանգիստ լինի. ոմանք գործել բնաւ չեն բաղձար, այլք չափազանց ճգնին, ոմանք թուլամարթ, այլք խիստ առոյգ լինին, ոմանք չափազանց քնանան, այլք հաղիւ կրնան մրափել։ Մարթն խիստ քիչ արտաշնչելով շատ կրմին և դիւրաւ պաղ կառնուն և յօդացաւի կենթարկին, նաև հարբուխն և մարթի բորբոքումք զանոնք կը նեղեն, ատամունք կը ցաւին ու բազում այլ անհանգստութեանց կը մատնուին։ Իսկ ուղեղին երակներն արիւնով լցուելով, գլխացաւ, գլխի պտոյտ, թմրութիւն, ձգտումն ջղաց, խօսելոյ մէջ շփոթութիւն և լն. նոցա սովորական բաժինն լինի։ Սակայն յղութեան մարմնոյ վրայ ունեցած այս հետեւանքներէն զատ նա մտային կենաց ևս կազդէ։ Յղի կինը այժմ

կզգայ որ իր կենաց այս վիճակը կարեւոր և ծանր է։

Երբ երախային ծննդեան օրերն մերձենան ստինք սկսին ուռիլ և մեծնալ, կաթի երակներն կընդարձակին և լայծ կաթ կարտադրեն։ Վերջին 8—15 աւուրց մէջ որովայնի նեղութիւնները կը բազմապատկին, զի երախան զինքը շրջապատող բողոքն 'ի միասին ծննդական գործարանաց անցքին վրայ կը կախուի, ուստի միզելոյ գրգիռն կը յաճախի. իսկ կուրծքին արկղը ճնշմանէ աղատելով, թոք և սիրտ ըստ բնականի գործել սկսին, որով շնչառութիւնը դիւրանայ։ Այժմ կինը իմանայ թէ ծննդաբերութեան օրերն մերձեցած են և ըստ այնմ սկսի իւր նոր հիւրը ըստ արժանւոյն ընդունելու համար նախապատրաստութիւններ ընել։

ԳԼՈՒԽ Ե.

ԿԱՆՈՆՔ ՎԱՍՆ ՅՂԻ ԿԱՆԱՆՑ

Երախան արեգական լոյսն տեսնելէ առաջ մայրը խել մը սրբազան պարտաւորութիւններ ունի զորոնք պէտք է ամենայն ճշգրտութեամբ գործադրէ վասն կենացն երախային։ Մայր մը անոնց բոլորովին անհոգ լինելով պատճառ կըլլայ անոր մտապէս ու մարմնաւորապէս խեղ և թերակազմ լինելուն։ Ինչ է պատճառը որ այնքան մանկունք մեռեալ կամ հիւանդոտ աշխարհ

կուգան. ի՞նչ է պատճառը որ այնքան բազմաթիւ երախայք ծննդենէ քիչ մը ետքը հիւանդանան կամ մեռնին.—Ոչ այլ ինչ քան զայս, զի նոցա մայրերն մանկիկն յարգանդի կրած ատեն իրենց պաշտօնին մէջ պարտաղանց գբաղուեցան. զի բազմաթիւ են այն կանայք որ իրենց պարտուցն տեղեակ չլինելով բուն իրենց մարմնոյ և արեան դէմ այնպիսի յանցանքներ կը գործեն՝ որոյ դառն հետեւանքները անմեղ մանկանց վրայ ցկեանս դրոշմեալ կերեւին։ Այս ամենէն պարզ կերեւի որ յղի կանայք պարտաւոր են սովորականէն տարբեր կեանք մը վարել, զի նոցա պաշտօնը, նոր էակ մը գոյացնելն, ոչ թէ միայն կարեւոր, դժուար և երկարատեւ է, այլ զի նա անոնց մարմնոյ անդամոց վրայ էական փոփոխութիւններ յառաջ կը բերէ, և երախան ալ իր սնունդը լոկ մօրմէն կընդունի. ուստի որքան կարեւոր է որ մարդ իրենց պարտաւորութեանցն տեղեակ լինելէ զատ ամենայն ջանք գործադրեն այնպիսի կեանք մը վարելոյ որով թէ բուն իրենք և թէ երախայք կատարեալ առողջ կեանք մը վայելեն։

Յղութիւնը հիւանդութիւն չէ. ասի լաւ միտք առնելու է. ուստի նորա սովորական և բնական անհանգստութիւններն ցրուելու համար դեղօրէից պէտք չէ դիմել։ Երբ կինը տարակուսանաց մէջ լինի, թէ յղութեան մէջ իր զգացած նեղութիւնք այլ տկարութենէ՞ թէ յղութենէ պատճառեալ են, պէտք է հմուտ բժիշկի մը խորհուրդին դիմէ։ Սակայն սա ալ գիտ-

նալ հարկ է որ երեւակայական տկարութիւնք շատ հեղ յիրաւի հիւանդութեան կը մատնեն զմարդ և կեանքը կը դառնացնեն։

Արդ քանի որ յղութիւնը հիւանդութիւն չէ կերուխումի մասին սովորական կանոնը խախտելու չէ։ Ամեն բան որ նոցա զզուանք պատճառէ և փսխելու առիթ լինի պէտք է, ինչպէս ի սովորական կենաց, զանց առնել։ Ընդհակառակն սրտին ցանկացած ամեն բան ուտելու կամ խմելու չէ նա, զի չուտելով ոչ ինք ոչ ալ երախան վնաս կը կրեն, ինչպէս որ սովորաբար կը կարծուի։ Եթէ նա դիւրամարս, ծարաւ անցընող և չթմրեցնող բանի մը ախորժակ ունի, կրնայ այն բաղձանքն յագեցնել. սակայն անսովոր և անբնական նիւթերու, զարդարանաց և նորաձեւ հագուստից և ասոնց նման ցանկութեանց բնաւ ականջ տալու չէ, զի ասոնք ստամոքսին հետ գործ չունին, աղի կամ թթու կերուխումներու փափաք մը կրնայ ստամոքսին մէջ յղանալ, բայց պաճուճանաց անոտի և ունայն ցանկութիւնը ստամոքսին հետ երբէք յարաբերութիւն չունի։

Ո՛րքան յաճախ խրատենք որ յղի կանայք միզելու գրգիռն ճշդութեամբ գործադրեն, բաւական չէ։ Սովորական կենաց մէջ բազումք ասի կերկարաձգեն, առանց վնաս մը կրելոյ, սակայն յղութեան մէջ ասի անտեսելի է և անպատիժ չմնար. այո՛, բազումք այս պատճառաւ մահուան որս են եղած. զի արգանդէն շարունակ ճնշեալ միզանօթն, փոքր ինչ լցուածին պէս

պարպուիլ ճգնի. եթէ սոյն ճգնանց խուլ և անզգայ լինին, միզանօթն և աղիքներն կսկսին բորբոքիլ և բաղում ցաւ պատճառել։ Նմանօրինակ աղբին աղիքներն օրը գէթ երկու կամ երեք անգամ մաքրել հարկ է, և ասի կատարուած առեն զգուշ լինելու է ճնշմանէ, զի ասով անպատեհ ծննդեանց առիթ կը տրուի։ Ուստի սնդուքիւն ունեցող կանայք հմուտ բժիշկի մը դիմելով լուծողական դեղ մը առնելու են։

Աշխատութեանց մասին, որք ամենայն մարդկանց մարմնական և մտաւորական առողջութեանը համար խիստ կարեւոր են, յղի կանայք ալ աշխատելու են որ անգործութեամբ տկարութեան չմատնուին։ Եթէ նոքա այնքան աշխատին որ յոգնելով հանգիստ քնանան թէ իրենց և թէ երախային առողջութիւնը կը զարգանայ։ Ընդհակառակը չափազանց և բուռն աշխատութիւնը մարմինը այնքան կը գրգռէ որ քնոյ արգելք լինի և թէ մօրն և թէ երախային վնաս հոտայ։ Աշխատութիւնք մարմինը ցնցելու չեն. բարձր տեղէ մը կամ խրամի վրայէ ցատկելն, ծանր բաներ վերցնելն, քշելն կամ քաշելն, մանաւանդ որովայնի վրայ բեռ տանելն և կամ որովայնով կարծր նիւթոց կրթնելն և քօտէն (Պատկ. Ը) խիստ վտանգաւոր են։

Քնոյ նկատմամբ պէտք է հոգ տարուի որ յղի կանայք մաքուր օդով, արիւնարբու միջատներէ զերծ և խաղաղ սենեակի մը մէջ հանգստանան, 7 ժամ քունը բաւական է. սակայն նա որ սովորեալ էր աւելի երկար քնանալ յղութեան միջոցին ևս կրնայ իր սովորութեանը հետեւիլ։ Ցերեկն քանի մի ժամ քնացող կինը թող լաւ գիտնայ որ անգործութեամբ առողջութիւնը պիտի վտանգի։ Ննջարանը պաղ լինելու չէ. զի պաղ օդը եթէ արգանդը թափանցէ և նորա սովորական և բնական ջերմութիւնը խանգարի երախան կը մեռնի, ճիշդ ինչպէս որ եթէ թուխսի նստած հաւն հաւկիթներուն վրայէն երկար ատեն հեռանայ, հաւկիթներն պաղելով մէջի գոյացած վառեակներն ալ կը մեռնին։ Ընդհակառակը չափազանց ջերմութեամբ ալ արգանդին բնական տաքութիւնը բազմապատկուելով նոյնպէս երախային մահուանը պատճառ լինի. ճիշդ ինչպէս որ թխսիչ մեքենային փռան չափազանց ջերմութիւնը հաւկիթներուն մէջ գոյացող վառեակներն կը մեռցնէ։ Ուստի յղի կանայք ինչպէս ցուրտէ այնպէս ալ չափազանց ջերմութենէ զանձն ազատ պահելու խիստ ըզգուշ լինելու են։ Եթէ այս երկու պատճառներէն մին արգանդին երախան մեռցնէ, յայնժամ կանայք մանկին շարժումներն այլ ևս չեն զգար. արգանդը անոնց ցուրտ և օտար կոյտ մի թուի և որ կողմ որ դառնան կոյտը հոն գլորի, 8—15 օր ջերմի նման նշաններ միմեանց յաջորդելէ զինի մեռեալ երախան ծնի, որ երբեմն այլ ևս դժուարագոյն լինի քան կանոնաւոր և բնական ծնունդն, և մանկաբարձ—բժշկի մը միջամտութեանը հարկ լինի։

Բայց ի սոցանէ ներքին կենաց վիճակը թէ յղի կանանց և թէ արգանդին մէջ կազմակերպուող

էակին վրայ մեծ ազդեցութիւն ունի, ուրախ և զուարթ բնութիւնը թէ իր և թէ երախային առողջութեանը նպաստաւոր է, քանի որ բարկութիւն, երկիւղ, նախանձ, տրտմութիւն, սրտմտութիւն և ասոնց նման ամէն կիրք և յուզում ոչ թէ միայն զմայրն տկարացնեն, այլ երախային արգանդէն մանուկն արգիլելով, զանի եւս կը վնասեն։ Այս պատճառաւ արգանդը շատ երախայից դերեզման եւս լինի, զի երբ յղի կինը ներքուստ յուզի և գրգռի, կէս ժամ յետոյ մանկիկը կը մեռնի և քանի մ՝օրէն մեռեալ մանուկն կը ծնի։ Այս տեսակ ծնունդը վիժում կը կոչուի։

Որովայնի փոքր ինչ հանգստութիւն պարգեւելոյ համար յղի կանայք կրնան մասնաւոր գօտի մի գործածել։ (Պատկ. Թ.) այսպիսի գօտի մի ներկայացնէ։ Ասի ամառնային եղանակի համար կրկնակի կտաւէ իսկ ձմեռուան համար բարակ և կակուղ կաշիէ կրնայ պատրաստուիլ։

Սոյն գօտին երկու մասերէ կը բաղկանայ, և առջեւի կողմը այնպէս շինուած է որ կապերու և օղակներու միջոցաւ որովայնը ո՛րքան ծաւալի նա ալ այնքան կրնայ ընդարձակուիլ և կրնակի կողմէն երեք ժապաւէնով որովայնին վրայ կը հաստատուի։ Շապիքին վրայէն եւս ասի գործածուելով արգանդը տաք կը մնայ, և պաղ առնելէ ազատ լինի։ Առաւօտեան անկողնէ ելլելէ մինչեւ նորէն քնանալ երթալու ժամուն ասի կրնայ որովայնի վրայ կապուած մնալ և ընտանեկան հազարաւոր պարտուց տակ ցերեկն՝ի բուն ճնշուող կանանց համար մեծ դիւրութիւն

մ՝է, և արգանդին բեռն կը թեթեւցնէ։

Քսան և հինգ տարին անցուցած և առաջին անգամ կամ դժուար ծննդաբերութիւն ունեցող կանայք լաւ կընեն եթէ յղութեան վերջին երկու կամ երեք շաբաթուց մէջ 10–12 ջերմ լուացումներ ընեն. սակայն բոլոր մարմինը պէտք է սորա ենթակայ լինի և ամէն մի լուացում կէս ժամ տեւելու է. ջրոյ ջերմութիւնը 26 կամ 27 Ռէօմիւրի ջերմաչափին աստիճանը անցնելու չէ։ Նաեւ որովայնը պնդութենէ ազատ պահելու է մինչեւ իսկ եթէ ասի դեղի միջոցաւ լինի։

Սոխնք նաեւ, ծննդենէ անմիջապէս զինի, երախային նախնական պիտոյից մին գոլով, պէտք են նախապատրաստուիլ։ Եթէ սոխնքներուն ծիծերն մանր են, կրնան, մինչ՝ի գալուստն երախայի, մեծնալ, երբ կինը, ծննդաբերութենէ 4–6 շաբաթ առաջ զանոնք ամէն օր 3–4 անգամ երեք մասերուն մէջ ամփոփելով առանց ցաւ ընելոյ դուրս քաշէ։ Իսկ եթէ ծիծերուն մաշկը նուրբ և նախնթաց գործածութենէ վիրաւորեալ է Ռոմով թրջելու է որ կարծրանայ. ծիծերուն ծայրը փշտիկներ գտնուած ատեն այլ եւս յաճախ պէտք է զանոնք Ռոմով թրջել որ մանկին ծննդենէն առաջ բժշկուին։

Վերոյիշեալ պարզ կանոններուն համաձայն կեանք վարող կինը թէ զինքը և թէ երախայն բազում նեղութիւններէ և անհաճոյ և վտանգաւոր դէպքերէ կազատէ։

ԳԼՈՒԽ Զ.

ՈՐՈՇՈՒՄՆ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ։

Նախնեաց գլխոց մէջ հաղորդած կարեւոր գիտելիք յղի կանանց համար բաւական չէն. որդեծննդենէ առաջ այլ կէտմ'ալ կայ նկատելիք. անոնք պէտք է գիտնան թէ ո՛ր ժամանակի մէջ երախային ծնունդը տեղի պիտի ունենայ, որպէս զի ըստ այնմ իրենց մարմնական և ընտանեկան կարգադրութիւններն ընեն։ Ասի խիստ կարեւոր գիտելիք մ'է, զի բազումք առանց անտեղեակ լինելով 'ի ճանապարհի կամ 'ի շոգենաւի և կամ յօտարութեան ծննդաբերութեան պատահած են. ուստի սոյն խնդրոյս պարզ լուծումը հոս կը հաղորդեմք։

Եթէ կին մը իր յղացած օրն որոշակի գիտէ, որդեծննդեան ժամանակն ալ որոշելն դիւրաւոր չէ, զի յայնժամ 40 շաբաթն կամ 280 օրն որդեծննդեան մերձագոյն ժամանակն է։ Սակայն յղութեան օրն սովորաբար անորոշ լինելով հարկաւ չենք կարող վերոյիշեալ հաշուով որդեծննդեան մերձագոյն թուականն որոշել. ուստի այլ միջոցի պարտինք դիմել։ — Երբ պարբերականը առաջի անգամ գադրի, առանց այլ ևս վերադառնալոյ, յայնժամ նոյն օրէն 38 շաբաթ կամ 266 օր հաշուելով ծննդեան ժամանակն կը բնայ գտնուիլ, զի կինը 14 օրէ 'ի վեր յղացած լինելու է, որ 266 աւուրց վրայ գումարելով

յղութեան ամբողջ միջոցին, կամ 280 աւուրց, հաւասար լինի։ Թէ եւ որդեծնութիւնը սոյն հաշուէն 8–15 օր կրնայ տարբերիլ, սակայն ասի մեծ զանազանութիւն մը չէ. բաւական է որ կինը գիտնայ թէ այս կամ այն շաբթուան մէջ երախային մայը լինելոյ պատուոյն պիտի արժանանայ։

Արգանդին մէջ մանկան շարժումներէն ալ որդեծննդեան ժամանակն հնար է որոշել։ — Կանոնաւորապէս կազմակերպուող երախան յղութեան 18° շաբթուն սկսի մարմնոյ անդամք և մարմինը այնպէս շարժել, որ ուշադրութիւն ընող մարդ սոյն շարժումն զգան։ Արդ մանկան յարգանդի ըրած շարժման օրն միտք պահելով նորա ծննդեան օրն դիւրաւ կորոշուի. զի անկից 22 շաբաթ զկնի որդեծնութիւնը տեղի կունենայ։ Ասի եւս չէ այնքան վստահանալի, զի կան մանկունք որք յղութեան 17° շաբթուն իսկ այլք 19° ին շարժին։ Սակայն այս երեք կերպ հաշիւներն 'ի միասին կրնան մայրը որդեծննդեան ամենամօտ օրն ճշդիւ որոշելու առաջնորդել։ (*)

Այժմ, մայրն որդեծննդեան օրն ևս գիտնալով, պէտք է իրեն և երախային համար մի յարմար և խաղաղ սենեակ պատրաստել, սենեակ մը որ ձմրան ցուրտ եղանակին դիւրաւ տաքնայ, և ամառնային արեգական կիզիչ ճա-

(*) Սոյն երեք հաշիւներն 'ի միասին Ամուսնական Մշտատեւ Տարեցոյցն կը կազմեն զոր դրքիս վերջը գրած ենք։

ռագայթներէն զերծ և ազատ լինի։ Նաև ամենայն ինչ որ որդեծննդեան աւուրց մէջ թէ իրեն և թէ երախային գործածութեանը հարկաւոր է, պէտք է պատրաստել։ Իսկ եթէ որդեծննդենէ 3 կամ 4 շաբաթ առաջ մանկաբարձի մը հետազօտութիւնք ապացուցանեն թէ մանկիկը արգանդին մէջ ծննդեան աննպաստ դիրք մ'ունի, պէտք է, որդեծննդեան ցաւոց սկսելուն պէս, մանկաբարձ—բժիշկ մը օգնութեան կոչել։

Այս ամէն կանոնները ճշդիւ ի գործ դնող յղի կին մը որդեծննդեան դժուարին պարտքէն թող բնաւ չի խրտչի, այլ ամենայն զուարթութեամբ և ուրախութեամբ թողբնութեան իր վրայ դրած սոյն պարտքն ևս կատարէ։

ԳԼՈՒԽ Է.

ՈՐԴԵԾՆՈՒԹԻՒՆ

Որդեծնութիւն կամ ծնունդ կըսուի ծննդական այն արարքն որով կազմակերպութիւնը աւարտող երախան յարգանդէ յաշխարհ փոխադրուի, իսկ թերակազմ մանկիկին յաշխարհ փոխադրուիլը վիժում կը կոչուի։ Երբ արգանդին մէջ գոյացող էակին կազմակերպութիւնը այն աստիճան կատարելագործեալ է որ նա կարողացած սեպուի ըստ իր որոշման մայրական մարմնէ դուրս ապրելոյ, յայնժամ որդեծննդեան գործո-

ղութիւնը կսկսի, որ մարդկանց համար յղութեան 40° շաբաթն է և սովորաբար կէս գիշերէն կամ՝ անկից 3 ժամ ետեւ տեղի կունենայ։

Ծննդական գործարանաց անցքին վրայ իջած արգանդը սկսի միզանօթն այն աստիճան ճնշել որ հարկ լինի յաճախակի մէզն արտաքսելոյ։ Արգանդը ամփոփուելով կամ քաշուելով ցաւ մը կը պատճառի, որ թէ և 'ի սկզբան չափաւոր է բայց երթալով սաստկանայ։ Արգանդին հզօր ամփոփմունք երախան յաշխարհ ածելոյ կը ծառայեն։ Երախան շրջապատող ջուրն դուրս հոսելով սովորաբար նախ մանկան գլուխն, (Պատկ. Ժ) երբեմն նաեւ ոտքն կամ թեւը, երեւան կելլէ. ցաւն երթալով սաստկանայ, զի արգանդ հզօր ձգտումներով երախան աշխարհ ածել ճըգնի, ի վերջոյ երախան արգանդէն բոլորովին արտաքսուելով և պորտին լարն ևս կտրելով մանկիկը մօրմէն բոլորովին կանջատուի։ Այժմ ցաւերն ևս դադրելով մօրն վրայ ընդհանուր յոգնութիւն մը կը տիրէ։ Այսի ամենը, որ որդեծընդեան արարքն կը կազմեն, մերթ քանի մը բոպէի, մերթ ¼ և մերթ ½ ժամու մէջ կաւարտի. սակայն թէ ցաւն և թէ ծնունդն խիստ բռնանայ երբ արգանդին մէջ երկրեակ (Պատկ. ԺԱ.) կամ, որ հազիւ կը պատահի, տարօրինակ մարդկային հրեշ (Պատկ. ԺԲ) մը կայ։

Որդեծննդենէ ետեւ մայրն պարտաւորի 9 օր անկողնոյ ծառայել, որպէս զի որդեծննդեան բուռն արարքին միջոցաւ ծննդական նեղքին

գործարանաց ստացած վէրքերն բուժին։ Այն 9 աւուր մէջ մայրն և երախայն ընդարձակ, բարձր և չոր սենեակի մը մէջ պէտք է պառկին, որոյ ջերմութիւնը չափաւոր և օդը մաքուր լինելու է։ Մայրն ամենայն հանգստութիւն և անդորրութիւն պարտի վայելել, նա մաքրութեան, կերուխումի, մարմնոյ դարմանատարութեան և մորթի արտաշնչմանց մասին խիստ հոգատար լինելու է, և եթէ հնար է երախայն իր ստինքներովն անձամբ սնուցանելու է։ Մօրը մտային անդորրութիւնը չփրդովելու համար ամենայն ջանք ի գործ պէտք է դնել, ուստի այցելութիւնք ըստ այնմ կարգադրելու է։ Սնունդը պարզ և դիւրամարս լինելու է և կանոնաւոր ժամուց մէջ առնելու է։ Առաջին 4 աւուրց մէջ նա թեթև ապուրներէ պէտք է սնանի. յետոյ մի ջուր, սպիտակ հաց և դիւրամարս մսեղէն կերակուր ալ կրնայ ուտել, զոր լաւ ծամելու է, խմելու համար փոքր ինչ տաքցած ջուրի հետ կաթ խառնելով, նուշի կաթ, ծաղկեայ քաղք թէյեր, հացի ջուր և դարիէ շինուած ապուրի հեղուկն կրնան տրուիլ։ Եթէ մայրը 2–3 օր պնդութիւն ունի տաք ջրով գրէթ պէտք է ընել. սակայն կինը բնական կարիքն սենեակին մէջ պէտք է կատարէ այլոց օգնութեամբը։ Մարմին, սենեակ և հանդերձ պէտք է խիստ մաքուր պահել. և պաղ առնելէ ալ շատ զգուշ պէտք է ըլլալ. մանաւանդ քրտնած միջոցին. ուստի ժամանակէն առաջ անկողնէն պէտք չէ ելնել. հանդերձներն փոխած ատեն պաղէ զգուշանալն և սենեակին միշտ միօրինակ ջերմութեան մէջ պահելն նկատողութեան պէտք է առնուլ. ներքին հանդերձք չոր և տաք լինելու են և մարմինը ու սենեակը մաքրուած ատեն ամենայն զգուշութեամբ պաղելէ զգուշանալու է։ Եթէ այն 9 աւուրք առանց դժբաղդ պատահմանց անցան մայրը օրը մի քանի ժամ անկողնէ դուրս կրնայ անցնել. սակայն 'ի սկզբան շատ կանգնելու և քալելու չէ, այլ կամաց կամաց և մեծ զգուշութեամբ մարմինը սովորական կենաց վարժեցնելու է։ Այն կանայք որ առաջին 6 շաբաթուց մէջ կերուխումի կողմանէ անփոյթ են, չափազանց կաշխատին եւ կարտորան սովորական կենաց հետեւիլ, նաև մտային բուռն գրգռանաց տեղի կուտան, մեծ և ծանր վտանգներու ծագմանը պատճառ կըլլան։

Ծնունդէն անմիջապէս ետեւ երախային մարմինը արգանդին ջրովն և այլ նիւթերով օծեալ է, ուստի մորթն օտար նիւթերէ մաքրելու համար տաք ջրով պէտք է մարմինը լուալ։ Սակայն սոյն պարարտ և իւղային նիւթք լոկ լուացմունքով մորթէն չեն արտաքսուիր. ուստի նախ մանկան մարմնոյ վրայ կամ ալիւր դնելու է և կամ զանի մաքուր իւղով և կամ խոզի ճարպով օծելու է. Ռէմիւրի 28° աստիճան ջերմութեամբ տաք ջրով զանի 20—25 վայրկեան մասնաւոր սպունգով մը լուալու է. լուացման ատեն երեսէն զատ բոլոր մարմինը ջրոյ մէջ թաղելու է որպէս զի ջերմութիւնը ամբողջ մարմ-

նոյ ազդէ։ Այս նախնական լուացման մէջ աճառ գործածելն մեծ սխալմունք մ'է. զի մանկան նուրբ մորթն դիւրաւ նորա կծու ազդեցութենէն կը վիրաւորուի։ Վնասակար է նաև երախային աչքերն սոյն աղտեղի ջրով լուալն, իսկ եթէ անզգուշաբար մանկան աչքերուն սոյն պղտորեալ ջրէն հաղորդուեցաւ, այլ անօթի մը մէջ տաք ջուր լեցնելով ուրիշ մաքուր սպունգով մը աչքերը մաքրելու է։

Լուացուած երախան հագուեցնելէ և անկողնին դնելէ առաջ պէտք է նախ նորա պորտը կտաւի մէջ փաթթելով որովայնին վրայ գօտի մը (Պատկ. ԺԳ.) կապել, ապա հանդերձներն հագցնելով մանուկը նախ կտաւէ և ապա բրդեղէն ֆանէլա սաւանաց մէջ փաթթելով փետուրէ անկողնոյ մէջ և կամ բրդեղինաց մէջ փաթթելով պառկեցնելու է։ Փաթթել ըսելով չըլլայ որ արեւելեան կապանք գուռնտագը, հասկցուի, ոչ. արգանդին մէջ երախային սրունքը, վիզը, թեւերը և մարմինը կոր և ամփոփեալ լինելով եթէ ծնածին պէս զանոնք բռնի շտկել փորձենք և զանոնք մոմեայի նման փաթթենք, յիրաւի անոնց շատ ծանր ցաւեր պատճառ կըլլանք։

Ընդհակառակն պէտք է երախայն ինչպէս որ արգանդին մէջ ազատ վարժուած է նոյնպէս ազատ թողուի. խանձարուրը հաւատաքննութեան ատեն գործածուած տանջանաց մեքենայներէն մին և ամենասոսկալին է. անով շրջապատեալ երախան անկարելի է որ ազատօրէն շնչառութիւն ընէ. զի մանկունք շունչ առած

ատենին որովայնին և կուրծքին պատերն առաջելել կընդարձակեն քան թէ չափահաս անձանցը։ Ուստի այն որ բարեկազմ և ներդաշնակ անդամներով զարդարեալ մանկանց տէր լինիլ կուզէ պարտի մանկանց քօրուն, խանձարուրը, գուռնտագը, իր տանը շրջանէն 'ի սպառ արտաքսէ։

ԳԼՈՒԽ Ը.

ՄԱՅՐ ԵՒ ՄԱՆԿԻԿ

Քանի որ երախան մօրն արգանդին մէջ էր նորա արիւնէն կը սնանէր. այժմ ծննդենէ զկնի սննդեան այս տեսակն դադրելով մայրական կաթովը սնանիլ սկսի։

Արգանդին մէջ նոր էակի մը կազմակերպութիւնը սկսելուն պէս մօրն ստինքներն արգանդին սնուցիչ հեղուկին նման հիւթով մը կը լեցուին. ծննդենէ զկնի սոյն հիւթը, որ կաթ կը կոչուի, այնքան կառատանայ որ թէ որ մայրը անձամբ զերախան չսնուցանէ իր անձը բազում վտանգաց կենթարկէ, զի կաթն գոյացնող հիւթք դեպի որովայնը, գլուխը և մարմնոյ այլ մասանց ուղղէ որով մարք այլ և այլ հիւանդութեանց կը մատնուին և 'ի վերջը մահուան որս լինին։ Ասկից եբր յայտնի ճշմարտութիւն կը հետեւի որ մարք գոնէ բուն իրենց կենացն պաշտպանութեանը համար երախան անձամբ սնուցանելու

են։ Արդ ի՞նչ յիմար գաղափարաց կը ծառայեն այն բժիշկներն որք Արարչին սոյն իմաստուն կարգադրութիւնը եղծել կուտան խրատելով որ մարք փոխանակ անձամբ իրենց մանկունքը սընուցանելոյ զանոնք կաթնատու կանանց յանձնեն։ Ասի լոկ վերատին յղութիւնը փութացնելու համար է. զի եթէ մայր մը իր երախան չը սնուցանէ 2—4 շաբաթուց մէջ կաթ արտադրող մսանք թուլանան, և ծննդական գործարանք վերստին գրգռելով նորէն յղանան. ասի մայրական մարմնոյ այլ եւս նեղութիւն պատճառէ քան թէ ամբողջ տարի մը անձամբ տղան սնուցանելը։ Ասով նաեւ ծննդական գործարանք կեղծուին, զի ըստ օրինաց բնութեան եթէ նոքա 9—12 ամիս չհանգստանան կը վնասուին։ Բնութեան օրինաց այս բուռն եղծումը նախ մօրն և ապա մանկին կը վնասէ. զի ծննդենէ ետեւ ծննդական գործարանք հանդչելու իսկ ստինք գործելու են այս է բնութեան Ահմանադրութիւնը և եթէ սոյն օրէնք եղծուի ծընդական գործարանք լոկ կազմարանի կամ ձուլարանի նման մէքենայի վերածուելով, կը հոգնին, թուլանան և կը վնասուին և տկար և թերակազմ մանկունք միայն կրնան յառաջ բերել։ Տե՛ս նա մայրն, որ սասնամեայ ամուսնական կենաց մէջ 12 մանկունք ունեցած է. տես ո՞րքան ապառողջ և տկարակազմ են նոքա. նոքա անզօր, թերակազմ և թուլամարթ ապառնի սերընդեան մը կարապետներն են։

Անձամբ սնուցանելուն օգուտներն թէ մօրն

և թէ երախային համար շատ են։ Կրսուի թէ երախան՝ մօրն ստինքներն ծծելով կաթին հետ նորա բարի յատկութիւններն ևս կուլ կուտայ. ասի ո՛րքան որ առասպելաբանութիւն ալ ըլլայ տակաւին մեզի կարեւոր ճշմարտութիւն մը կը հաղորդէ։

Մօրն ստինքներն ծծող մանկիկը նորա փայփայանացը, լեզուին, ձեւերուն, դիմացը և կամացը կը վարժուի և նոցա ազդեցութիւնը կսկսի իր մտաց վրայ տպաւորուել, ասով զանի կրթելն խիստ հեշտ և դիւրին լինի։ Կաթնատու կինը անկարելի է որ մանկիկը իբր մայր դարմանէ, զի եթէ նա մայրական պարտաւորութեանց զգացումը կը յարդէ նախ պարտի իր բուն մանկիկը սնուցանէ. քանի որ զանի այլոց յանձնելով բուն ինքը մայրական պարտաւորութեան դէմ մեղանչած է. արդ ի՛նչ կը յուսացուի այնպիսի մէկէ մը որ բուն իր սրտոյն պտուղն ուրացած է. չէ՞ որ նա օտար մանուկը իբր վարձկան պիտի դարմանէ։ Ա՛յս անգութ կինը քանի մը դուրուշի համար իր զաւակը թողեր է որ մաշելով և տանջուելով գերեզման մտնէ. հնա՞ր է այսպիսի սրտի մը օտար նորածին մը յանձնել։ Ա՛յն կաթնատու կանանց մեծագոյն մասն եղած տուներուն մէջ իրենց յանձնեալ մանկանց բնաւ հոգ չտանելով ասոր անոր հետ ծանօթանալ կը ջանան և կսկսին անբարոյական ճանապարհից հետեւիլ։ Մա՛յրեր զգուշացէք ասոնցմէ։

Սակայն պատահի որ մօրն անկարելի լինի ե-

բախան անձամբ սնուցանել։ Երբ ստինքներն ծիծերէ զուրկ են, և նոցա տեղը փոխանակ դուրս ցցեալ լինելոյ ներս են ճնշեալ, յայնմ ժամ անձամբ սնուցանելը անհնար լինի։ Նոյն պէս անկարելի է անձամբ սնուցանել երբ ծիծերուն երկուքն ալ բորբոքեալ և կարծրացեալ լինելէ զատ ստինքներուն ևս այս բորբոքումն հաղորդեալ է. սակայն այս անհանգիստ վիճակս լոկ երախային ծծելովը կրնայ բարւոքուիլ։ Եթէ մարք կաթ տուած միջոցնուն լաւ հոգ տանին որ ստինք ըստ պիտոյից պարպուին, յայնժամ ոչ ոք ծծի բորբոքման, կարծրութեան և շարաւման համար պիտի գանգատի։ Թող չյուսահատին մարք երբ երախան սնուցած ատեն դըժուարութիւնք պատահին ամենափոքր ծիծերն ալ կրնան վարժութեամբ գործածելի լինիլ, երբ երկու ծիծերուն լոկ մին գործածելի է շարունակ այս մին ծծել տալով կաթը պարպել տալու է։

Բժիշկներուն դիտնալու բանն է թէ երբ մօր մը կաթը երախային վնաս կուտայ. "ամէն հիւանդ կամ հիւանդութեան ընդունակ կին պէտք է գիտնայ որ իր կաթը մանկին կը վնասէ", կըսեն բժիշկք, առանց խորհելոյ որ շատերն իրենց զաւակունքը անձամբ սնուցանելէ արգիլուելով շուտով գերեզման են իջած։ Սակայն կան հիւանդութիւնք որոց ենթակայ եղող մարք բնաւ իրենց տղայքը անձամբ սնուցանելու չեն։ Ասոնք են թոքերու կամ որովայնի աղիքներու շարաւալից բորբոքումունք ամբողջ մարմնոյ մարթին կամ խոռոչներէն մէկուն մէջ ջրոյ հաւաքում, մտաւորական կենաց աւերում ևն։ Ասոնց ենթակայ եղող մարք երախային ծնունդէն մինչեւ 3–4 շաբաթ կրնան կաթ տալ որպէսզի որդեծնութիւնը առանց վտանգի աւարտի. զի փորձով տեսնուած է որ ծննդական գործողութեանց աւարտումէն ետեւ երախան անձամբ սնուցանելէ արգիլուող հիւանդ մարք թոքախտի զոհ են եղած, քանի որ 2 շաբաթ կաթ տուող հիւանդ կանանց թոքային բորբոքումն ու շարաւումն բարւոքելով փոքր ինչ հանգստացան և ապրեցան։

Ծննդեան արարքն ըստ բնականի կատարուած ատեն երախան հոգնած և ծարաւի աշխարհ գայ. օդը, լոյսը, մանկաբարձին ձեռաց շօշափումնք, հանդերձանք և լուացման ջուրն մանկան նրբակազմ մարմնոյ վրայ խիստ ու կոշտ ազդեցութիւններ կրնեն, ուստի նոքա լան և եթէ քաջառողջ են. յոգնելով կը քնանան. սոյն կազդուրիչ քնէն նոքա յայնժամ զարթնուն երբ ծարտուն գիրենք ստիպէ, ուստի ասի յարմար ժամն է երբ մայրն իր ստինքն մանկան մատուցանէ. սակայն լաւագոյն է ստինքներուն ամենէն լեցունը ու ծիծերուն ալ երկայնագոյնը մանկան բերանը դնել, որպէսզի այս իրենց համար սընընդեան նոր եղանակէն չիրարչին։ Լաւ է նաև ծննդենէ 6–9 օր ետեւ մանկանց լոկ որոշեալ ժամուց մէջ կաթ տալ, զի եթէ մանկիկն կուշտ է ստամոքսին մէջ ընդունած սնունդը անոր երկու ժամ կը բաւէ։ Թէ ցերեկ և թէ գիշեր եր-

կու ժամն անգամ մի ծիծ տալու է անոնց, սա-
կայն մարք լաւ որոշելու են մանկանց ընդունած
կաթին չափը, ասի դիւրին է երբ մայրը ծիծ
տալէ առաջ ստինքներուն մեծութիւնը և կարծ-
րութիւնը նկատեն։ Նաև բնական կարեաց վրայ
ևս կրնայ նկատուիլ թէ արդեօք մանկունք առա-
տապէս սնունդ ստացած են թէ ոչ, զի առատ
կաթով սնանող հնգեռասանօրեայ երախան 24
ժամու մէջ 16–20 անգամ կը միզէ և 3–8 ան-
գամ աղբը կարտաքսէ։ Ասանց այս կէտերն
ուշադրութեան առնելոյ անհնար է մանկանց
ընդունած սննդեան չափն որոշել։

Մանուկը կաթէն կարելու նկատմամբ բաւ է
գիտնալ որ երբ մարմինը այն աստիճան զարգա-
ցած է որ ալ կարելի է այլ սնունդներով զանի
յագեցնել և սնուցանել, յայնժամ կրնայ զանի
կաթէն կարելու յարմար սեպել։ Սակայն սնն-
դարար նիւթն արեան վերածելոյ համար ակ-
ռայներ պէտք են որ սննդեան նիւթը ծամուի,
և այս ծամուած նիւթն մամացի փոխելու հա-
մար լորձունքի կը կարօտի. ստամոքսը լուծիչ
հիւթ և մարսեցուցիչ կարողութիւն և աղիք
ծծիչ մազանման երակներ ունենալու են։ Ա.յս
ամեն կարեւոր միջոցներէն մանկիկը մի միայն
ստամոքս մը և աղիք ունի և ասալ առանց մար-
սողական զօրութեան. ուստի անկարող են հաս-
տատուն կերակուրներէ սնունդ հայթայթել։
Ա.տամունք բուսնիլ սկսին, լորձունքի մասնիներն
առատապէս լորձունք կարտադրեն, սակայն ըս-
տամոքսի մարսողական զօրութիւնը չգոյանար

մինչեւ որ ատամանց թիւը 8–12 լինի։ Երբ ա-
սի կատարուի ժամանակ է երախան կաթէն կըտ-
րելոյ. կաթէն կտրելուն հետ պէտք է նաև ման-
կիկը այլ սնուցիչ նիւթի մի վարժեցնել, եթէ
ոչ մանուկը կը վնասուի։ Սակայն չենք կրնար ե-
րախան անմիջապէս և մէկէն ի մէկ կաթէն կըտ-
րել. ասի 8–12 շաբաթի գործ է։ Վերոյիշեալ
շաբաթուց մէջ ամեն շաբաթ մէկ մէկ անգամ
պակսեցնելու է կաթ տալու թիւը և սնունդը
այլ պակասով լեցնելու է, այս կերպով ստինք-
ներուն կաթն ևս նուազելով ոչ մայրը ոչ ալ ե-
րախան կը վնասուի։ Ուստի երախան կաթէն
կտրելու ժամանակը, ըստ բնութեան օրինաց,
անոր այլ սնունդ արեան վերածելոյ ընդունա-
կութեան հասնելու միջոցին կսկսի, իսկ երբ
մայրը հիւանդանայ, բժիշկի մը խրատին դիմե-
լու է, սակայն մօրն առողջանալու խնդրոյն հետ
մանկան չհիւանդանալու խնդիրն ևս ուշադրու-
թեան առնելով։

Շատ մայրեր Պարբերականի միջոցին տեսնե-
լով որ կաթը լոյծ լինի և նուազանայ, երախան
կաթէն կը կտրեն. ասի եթէ հնար չէ արգիլել
գոնէ նոյն միջոցին մանկին այլ սնունդ ևս տա-
լու է։ Պարբերակտնի ատեն երախան անձամբ
սնուցանելն յայնժամ ուշադրութիւն գրաւելու
է երբ մայրը յղութեան վիճակի մէջ կը գտնուի.
զի մօր մը համար հարկաւ ծանր բեռ մ՝է թէ՛
արգանդին մէջ և թէ՛ ստինքներուն զատ զատ էա-
կաց սնունդ մատակարարել. և ասի աւելի ար-
գանդին մէջ նոր գոյացողին վնասակար է քան

թէ ստինքը ծծողին։ Այս պատճառաւ մարք յղութեան վիճակի մէջ գտնուած ատեննին դադրելու են կաթ տալէ որ չըլլայ թէ արգանդին մէջ կազմակերպելի էակը սնունդէ զրկուելով թերակազմ լինի։

Երբեմն ալ երբ երախան մօրը ծիծերն կը վիրաւորէ, շատերը ցաւին պատճառաւ երախան կաթէն կը կտրեն. ոմանք կը ջանան ցաւը մեղմացնել և ապա կը շարունակեն նորէն կաթ տալ. իսկ այլք ծիծը մանկին բերանը դնեն և ցաւ զգացած ատեն յանկարծ զանի ետ կը քաշեն որոյ հետեւանքն լինի դադարումն կաթէ և կարծրացումն, բորբոքումն և շարաւումն ստինքներու։ Այս վիճակիս հասած ստինքներն շատ անտանելի ցաւ կը պատճառեն, և կաթ ծծելն դժուար, այո՛ անհնար լինի։ Ուստի երբ մօր մը ծիծերուն երկուքն 'ի միասին վիրաւորուին չըլլայ որ դադարի կաթ տալէ. այլ, քանի որ ծիծերուն մորթը ճեղքուած չէ, թող զանոնք կարմիր գինիով կամ ոսմով յաճախակի թրջէ և կաթ տուած ատեն ամեն անգամ լաւ մը լուա։ Իսկ երբ մորթը ճեղքուած է պէտք է վիրաց բուժմանը համար մէկ մաս գինեայի կեղեւն մէկ մաս Արաբիոյ խեժին հետ խառնէ և ամեն անգամ կաթ տալէ ետեւ ծիծերուն վերքերն սոյն փոշիովն ծածկէ և վերատին կաթ տուած ատեն ծիծերն լաւ մը լուա։ Դիւրագրգիռ կանանց համար մէկ մաս գինեայի կեղեւը երկու մաս խեժի հետ խառնելու է։ Ասի ամեն այլ տեղերը կը գերազանցէ։ Դիւրութեան համար 'մի անգամ

ծիծերուն մին փոշիէն մաքրելով երախային տալու է և միւս անգամ միւսը։

Վերոյիշեալ պարզ կանոնաց ուշադրութեամբ հետեւող ծնողք թէ զիրենք և թէ իրենց մանկունքը բազում հիւանդութենէ և փոանգէ կազատեն և երջանիկ կեանք մը կը վարեն։

ԳԼՈՒԽ Թ.

ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Մինչեւ այժմ ըսուածներէն յայտնի կը տեսնուի որ երախան չափահաս անձէ մը գլխովին կը զանազանի. և կը տարբերի թէ կազմակերպութեամբ և թէ կենցաղավարութեան կերպով։ Այս տարբերութեան դայ լինելն թէ և ամեն մարդ գիտէ սակայն ոչ ոք կրնայ որոշել թէ նա մանկական մարմնոյ որ մասին մէջ կը կայանայ, այսու ամենայնիւ հանրածանօթ իրողութիւն մ'է որ մանկական մարմնոյ ամենայն գործողութիւնք, ինչպէս, սնանել, աւելորդն մարմնէ արտաքսել, շարժում, քուն և խօսիլ, բոլորովին չափահաս անձանց և մանկանց մարմնոյ մէջի զանազանութիւնը ցոյց տայ. ուստի ծնողք սոյն գաղտնեաց լաւ ծանօթանալով մանկական մարմինը ըստ այնմ պէտք է դարմանեն։

Մանկանց մորքը խիստ նուրբ և կակուղ և բազմաթիւ ծակտիքներով լի է, այս պատճառաւ խիստ առատ քրտինք կարտադրէ և յարը-

տաքուստ այլ նիւթեր դէպի մարմնոյ ներսն ծծէ զի նա մարմինը քողարկող գործարան մի չէ այլ մարմինը արտաքին աշխարհի հետ հաղորդակցուԹեան մէջ պահող միջոց մը։ Այս պատճառաւ մանկունք խիստ դիւրաւ պաղ կառնեն։

Երախայական գլուխը 'ի ծննդեան շատ մեծ է. նորա ոսկորներն մէջէ մէջ անցնող կարերով և խոռոչներով մէկզմէկէ անջատեալ են, և լոկ մաշկեայ կապերով միմեանց հետ միացած են։ Ուղեղը արիւնով լի է. ծնոտի ոսկորն բարակ և ծակ ծակ է, ուստի առամանց հիմ չեն կրնար ըլլալ. այս պատճառաւ մանկանց ակռաներն շուտով և դիւրաւ թափին։ Լորձունքի մասաներըն թէ և գոյացած են, բայց առաջի ամիսները թուք չեն արտադրեր, այս պատճառաւ երախայից բերանը շուտով չորնայ և յաճախ կաթ ուտել կուզեն։

Երախայից մարմինը և նորա անդամք եւս չափահասուԹեան ժամանակինէն կը տարբերին։ Թոք փոքր և դեռակազմ են և շնչառուԹիւնը խիստ արագ կատարուի. սիրտը խիստ երագ կը բաբախէ և արեան շրջանը կը կանոնաւորէ. աղիքներուն շարժմունքն եւս սրտին նման շատ արագ կը կատարուի և աւելի բազկերակի բաբախմանց նմանի։ Ստամոքսը աղիքներէն միայն փոքր ինչ լայն լինելով անոնցմէ կը տարբերի։ Փայծաղն խիստ մեծ է և առատ արեամբ լի, և առատապէս մաղծ կարտադրէ։ Երիկամունք թերակազմ են, ուստի մէզն լայծ և ջրանման լինի. միզանօթը փոքր և առաձգականուԹենէ

զուրկ է, այս պատճառաւ մանկունք անկարող են մէզն ետ բռնելոյ։ Այս միջոցիս ծննդական գործարանք քաղցր քնոյ մէջ կը գտնուին։ Ոսկորք կակուղ են և դեռ միմեանց հետ ամէլով կապակցեալ չեն. մսանք թոյլ, անզօր և անկատար են. յօդակապք թերակազմ լինելով մանկունք անկարող են անձամբ ոտքի ելնելու կամ քալելու, ուստի ստիպեալ են կրնակի կամ որովայնի վրայ առտ և անդ շարժիլ կամ տեղ մը մնալ։ Նոցա ձեռաց ջիղերն դեռ անզօր լինելով ձեռքը բան չկրնար բռնել, զի նաեւ կամային զօրուԹիւնը արծաւծեալ է։

Այս ամեն թերուԹեամբ հանդերձ մանկունք զգան, ճաշակեն, լսեն, տեսնեն, և փոքրը ինչ հոտոտեն, նաեւ ծծեն, կուլ տան, պօռան, միզեն, աղբն մարմնէ արտաքսեն և քնոյ պարգեւներն վայելեն, զգայարանք արտաքին առարկաներուն ազդեցուԹիւնը մարմնոյ հաղորդելու դեռ անկարող գտնուին, այլ լոկ գրգիռ մը տան անոր. մանկիկը լոյսը կը տեսնէ առանց անոր վրայ խորհուրդ մ'ունենալոյ կամ մտով ըմբռնելու և հասկնալու։

Ամեն բանէ աւելի նա ծծել և ճաշակել կը ընայ և հասկնայ, զի արդէն արգանդին մէջ սոքա վարժուԹիւնը ըրած է. նորածինը մօրն ըստինքներն շրԹանց մէջ ամփոփելով չափահաս անձի մը չափ ուժով և զօրաւոր կրնայ ծծելու արարքն կատարել։

Այսպէս թէև մանկիկը ամենայնիւ տկար և թերակազմ է, սակայն իր կազմուԹիւնը կատա-

ըելագործելոյ օրէնքներն և ընդունակութիւնը իւր մարմնոյ մէջ կը կրէ. ասի մանկանց համար 21–23րդ տարեցն կաւարտի։ Ա.րդ փոքրիկ, թերակազմ, անօգնական և անկարող երախան կայտառ և առոյգ երիտասարդի և օրիորդի վերածելն ծնողաց սրբազան պարտքն լինելով այժմ կուգամք սոյն պարտուց կատարմանը օժանդակելու և ձեռնտու լինելու համար ծնողաց կենսական կանոններ հաղորդել վասն պահպանութեան և կատարելագործութեան մանկական կենաց։

ԳԼՈՒԽ Ժ.

ՄԱՆԿԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՕԹՆ ՏԱՐԻՆԵՐՆ

Կենաց առաջին տարեցն մէջ ամեն առողջ նորածին ամեն այլ տեսնէ աւելի տկար և անօգնական և նորա կեանքը անթիւ վտանգաց ենթարկեալ է։ Երկրորդ տարեցն մէջ սոյն թերութիւնք նուազին, մինչեւ որ երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ տարեցն մանկիկն զարգանալով կամաց կամաց իր մարմնոյ բուն տէրն լինելոյ կընդունակի։ Առաջին տարին երախան գլուխն և մարմինը ուղիղ պահել սովրի, ձեռքերն այս կամ այն նիւթն բռնելու վարժուի, ոտքերով սողալ կամ կանգնել սկսի, խօսելու գործարանք ևս վարժուիլ սկսին, սակայն

Բ. տարին նոցա արտասանութիւնը հասկնալի լինի. սոյն Բ. տարեցս մէջ նաեւ նոքա քալել կսկսին և ձեռքերն ըստ կամաց կը շարժեն։ Սոյն կատարելագործումը Ա. տարեցն մէջ կաւարտի և յայնժամ մանկիկը այլոց օժանդակութեանը չկարօտիր։ Սննդեան գործարանք Դ. տարեցն սկիզբը կը կատարելագործին։ Նախնական ատամունք Ա. տարեցն կսկսին կամ վերջէն սկսելով մինչեւ Գ. տարեցն մէջ կաճին, ասով մանուկն հաստատուն կերակուր ուտելու յարմար կըլլայ։

Ստամոքս և աղիք կատարելագործեալ լինելով մարսողութիւնը կընայ կատարուիլ։ Զ. կամ Է. տարեցն նախնական 20 ատամունք կը թափին, կամ աւելի ճիշդն ասելով, անոնց տակէն աճող զօրաւորագոյն ակռաներէ քշուելով կանհետանան. ասի մանկական մարմնոյ աճման նոր պարբերութեան մը սկիզբն սեպուի։

Մանկական մարմնոյ սոյն անկատար դրութիւնը, ուսկից նաեւ հետեւի մանկանց անզօրութիւնը, անկարողութիւնը և այլոց օժանդակութեան կարօտ լինելն, ցոյց տայ թէ մանկանց դարմանումը ո՛րքան կարեւոր և ո՛ր աստիճան դժուար է, զի սոյն եօթնամեայ պարբերութեան մէջ նոցա մարմինք բազում փոփոխութեանց ենթարկեալ լինելով, ամեն մի փոփոխութիւն իրեն պատշաճ դարմանումն պահանջէ։ Ուստի հոս ծնողաց համառօտաբար կը ներկայացնենք ինչ որ սոյն եօթնամեայ պարբերութեանը մէջ երախայական մարմնոյ դարմանա-

տարութեանը համար կարեւոր և գիտնալ հարկ է։

Նախապաշարեալք կարծեն թէ ակռայ հանելը մանկունք բազում հիւանդութեանց կը մատնէ. ասի սխալմունք մ'է, և ճշմարտութենէ հեռու կարծիք մը։ Եթէ ակռային միսը բորբոքեալ, ուռած և կարմրած է, մորն կամ դարմանչին անհոգութեանը պտուղն է սա, որք ակռայ հանող մանկին բերանը կարծր բաներ, ինչպէս կենդանեաց ակռայներ, ոսկոր, փայտ և մետաղ տան որպէս զի ըստ իւրեանց թիւր գաղափարաց նոցա վրայ խածնելով ատամունք շուտով դուրս ելլեն։ Սակայն ո՛չ ակռայ հանելն հիւանդութիւն է և ո՛չ ալ նա զերախան այլ հիւանդութեանց կառաջնորդէ. արդէն բազումք ակռայ հանող մանկունք բժշկաց յանձնելով պատճառ եղած են անոնց շուտով գերեզման մտնելուն։

Մանկունք մինչև 7 տարեկան ըլլալին տարբեր սնունդ առնելու են։ Նոցա նախնական 8 կամ 12 ամսոց մէջ մայրական կաթը անոնց համար ամենայարմար և բնական սնունդն է, ինչպէս որ արդէն անցեալ գլխոց մէջ ըսուեցաւ։ Սակայն գիտնալ պէտք է որ մանկունք սնուցանելու մասին միշտ բնութեան կարգադրութեանցն հետեւելու է։ Երբ բնութիւնը մանկանց 8—12 ակռայներ պարգեւէ, յայտ է որ կաթէն և հեղուկ սնունդէն զատ անոնց հաստատուն սնունդ ևս տալու ատեն է. այժմ ջրի կամ մսի ջրոյ մէջ սպիտակ հաց խառնելով և այս տեսակ այլ կերակուրներ կրնայ տրուիլ, զի մանկունք հիմայ ծարաւէն զատ նաև քաղց կզգան։ Սակայն նոցա մարսողութեան կարողութիւնը դեռ խիստ տկար լինելով զգուշութեամբ դիւրամարս սընունդ ընտրելու է. ուստի կանանչեղէն, մրգեղէն, թթու և աղի կերակուրներն բնաւ մանկանց տալու չէ։ Խմելու համար յարմարագոյնն է կովի կաթ և աղբիւրի ջուր։ Այսու ամենայնիւ ծնողք հոգատար լինելու են որ մանկունք լոկ իրոք քաղցած և ծարաւած ատեննին սնունդ պահանջեն և ստանան և կշտանալէն ետեւ դադարին ուտելէ։ Առաւօտուն արթննալէ ետեւ 1—2 տարեկան մանկանց 1—2 գաւաթ կովի տաք կաթի մէջ պաքսիմատ կամ սպիտակ հաց ջարթելով կրնայ դրուիլ։ Նկատելու է նաև թէ մանկունք կերակրուելէ ետև առոյգ թէ թոյլ եղան. ասի կրնայ միայն սննդեան չափն որոշելու։ Կէս օրէն 3 ժամ առաջ և կէս օրէն 4—5 ժամ յետոյ մանկանց իբր սնունդ կրնայ տրուիլ կաթագ, սպիտակ հաց, մսի ջրով ապուրներ, խաշող, կեռաս, խնձոր, ևն։ Երեկոյեան կամ կէս օրէն իբր 7 ժամ ետքը տաք կաթ, ջրախառն կաթ և կամ ապուր կրնայ տրուիլ։ Ջուրը գիշեր և ցերեկ յարմարագոյն ըմպելիք է։ Երեք կամ չորս տարեկան տղու մը առտու և երեկոյ միևնոյն կերակուրը կը տրուի, սակայն հարկաւ չափն ալ անոնց հասակին պահանջմանը համեմատ։ Կէս օրին անոնց եփած կամ խաշած միս կամ կաթն ապուր կրնայ տրուիլ, իսկ երեկոյին տաք կաթ, ջրով կաթ և կամ ապուր։ Կերակրոց որոշ-

եալ մասնաւոր ժամերն նկատելոյ մասին չափա-
հասք մանկանց օրինակ լինելու են։

Մանկանց բնական կարիք (այն է մարմնոյ
աւելորդն, աղբն և մէզն, արտաքսելն) կատա-
բելու մասին ծնողք շատ հոգատար պէտք է ել-
լան, զի մանկիկն ոչ բանիւ և ոչ ալ նշանով ի-
մաց կրնայ տալ երբ սոյն գրգիռէն ազդեցու-
թիւն կրէ. ուստի եթէ մարք անհոգ լինին,
յայնժամ ոչ թէ միայն մանկանց մարմինը այլ
նաև հանդերձանք աղարտելով և մանաւանդ
սոյն վիճակին մէջ երկար ատեն պահուելով ան-
հանգիստ լինելէ զատ մարմինը վէրքերով կը
լեցուի։ Ուստի 'ի սէր անբարբառ մանկանց
մարք և սպասուհիք սոյն կէտս իրենց ուշադ-
րութեան առնելով մանկունք միշտ աղարտեալ
հանդերձանքներէ անմիջապէս ազատելու են,
սակայն առանց անոնց մարմինը պաղի ենթար-
կելոյ։ Իսկ երբ մանուկն սոյն գրգիռն իմաց տա-
լոյ ընդունակ լինի, պէտք է նոցա պահանջն ան-
միջապէս կատարել։

Ըսինք որ մանկունք չափահասներէ կը տար-
բերին, սոցա տարբերութեան մէկ կէտն ալ
մանկանց մորթին չափահասներէ աւելի արտա-
շնչելն է, ուստի մանկունք աւելի գաղջ լուացմ-
մանց են կարօտ քան չափահասք, որպէս զի մոր-
թին ծակտիքներն զերեանք խցող նիւթերէն մաք-
րուին։ Սոյն լուացմանց ատեն գործածուած ջը-
ոոյ ջերմութիւնը Ռէմիւրի 28 աստիճան լինելու
է, ասոր մէջ մանկիկը ամեն օր կէս ժամ կրնայ
մնալ։ Լուացման ատեն աչքերն սոյն ջուրէն ա-

զատ պէտք է պահել, որոնք մանաւոր սպունգով և մաքուր ջրով յետոյ լուանալու է։ Երբ մանկիկն 6 կամ 9 ամսական լինի, տաք լուացումէն ետեւ նորա գլխուն և վզին վրայ պաղ ջուր լեցնելով և կամ գոնէ թրջելով նորա կազմութիւնը հաստատութիւն կտանայ. սակայն ասի կամաց կամաց լինի, տաք ջուրը քաղջի և քաղջն ալ պաղի փոխելով։ Ասի մանկան մինչև 4րդ կամ 5րդ տարին շարունակելէ ետք; պաղ լուացմանց համար զանի ծովը կամ գետը կրնանք լուալ. ասի լաւ է և հարբուխի և հազի ընդունակութիւնը ցրուէ։ Ամեն երեկոյ մանկանց երեսն, գլուխը, վիզը և ձեռքերը նաև ծննդական անդամներն լուալով անկողին դնելու է։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՆԴԵՐՁՆԵՐՆ

Քանի որ մանկունք բնական կարեաց գրգիռը չեն կարող այլոց յայտնել, ամենայարմար հանդերձներն սաւաններն են որոնց մէջ զանոնք փաթթելու է։ Փաթթել ըսի, բայց չեմ ուզեր որ սխալ հասկցուի, և մանկանց թեւերն և սրունգներն այնքան պինդ սեղմուի որ խեղճը անկարող լինի անդամ ըստ կամաց շարժել։ Իսկ երբ մանկունք այնքան զարգանան որ ալ կարենան հանդերձ հագնիլ, յայնժամ անոնց այնպէս ձև տալու է որ մարմինը տաքէ և պաղէ պաշտպանէ

և նորա ոչ մի մասն, ոչ վիզն, ոչ կուրծքն, ոչ որովայնը, ոչ թեւն և ոչ սրունգ սեղմելով և ճնշելով շարժամն արգելք լինի։ Ծնողք լաւ միտք բերելու են որ շունչը թոքերն մտած և անոնցմէ ելած ատեն կրծոց արկղն ալ վեր և վար շարժի, լայննայ և նեղնայ. ուստի եթէ կուրծք ճնշուին, այս բնական շարժումն արգիլուի և մարմնոյ վնաս գայ։ Իսկ եթէ թև և սրունգ բնութենէ իրենց համար որոշեալ զօրութեան և ճարտարութեան հանին պիտի, պէտք է որ մանկունք 'ի ծննդենէ մինչ 'ի վերջ մանկութեան հասակի այնպիսի հանդերձներ հագնին և այնպէս պաւէին որ մարմնոյ անդամոց շարժումը բնաւ չարգիլուի։ Գլուխն ալ ամառ և ձմեռ թեթև ծածկոց մի ունենալու է. ամառը յարդէ գլխարկ մը գլուխը արեւին ճառագայթներէն աւելի կը պահպանէ քան թէ գլուտակ կամ ֆէս. այս վերջինը մանկանց գլուխը այնքան կը տաքցնէ որ արիւնը ուղեղը կը հոսէ։ Ոտաց ծածկոյթին մեծ ուշադրութիւն պէտք է, զի սովորաբար մանկանց լայն և տձև ոտքերը փոխանակ կակուղ և լայն կօշիկներու մէջ ամփոփելոյ, ծնողք ընդհակառակը քալել նոր սորվող մանկանց փափուկ ոտքերն նեղ և կարծր կօշիկներու մէջ կը փակեն. ասոնք մանկանց ոտացն բնաւ չհամապատասխանելով մանկունք ալ կանգնիլ և քալել չեն ուզեր զի ոտքերնին կը ճնշուի և կը ցաւի։ Ուստի մանկանց կօշիկներն կակուղ և առաձգական նիւթերէ շինելու է և պէտք եղածին չափ լայն և երկայն և ամենայնիւ անոնց

ոտից համաձայն լինելու են։ Իսկ անոնք որ մանկանց ոտքերն ճնշելով բարեձև ընել կուզեն զանոնք, թող լաւ գիտնան որ խեղճ մանկունքը փապարներով (նասրը) լի ոտից տէր ըլլալու պատճառ պիտի ըլլան։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՇԱՐԺՈՒՄ ԵՒ ՔՈՒՆ

Շարժման հակամիտութիւնը ամեն մանուկ 'ի բնէ և 'ի ծնէ իւր մէջ կը կրէ, որ երթալով կ'աճի, սակայն մարդիկ այս Աստուածային պարգևը բանի տեղ չեն դներ։ Եթէ մանկան մարմնէն, նորա ծնելէն մինչև 7 տարեկան լինիլն, շարժումն վերցուցնենք նա այնքան տկար և անզօր պիտի ըլլար որ մեռեալէ կամ փայտի կտորէ մը տարբերութիւն չի պիտի ունենար։ Ամեն շարժում մարմնոյ զօրութիւնը անդամոց սովորական արարքներուն և պարտուցը կատարմանը կը յարմարեցնէ, որով նա ոչ թէ միայն մարմնոյ մի մասին, այլ բոլոր կազմութեան համար կենսապահ միջոց մը կ'ըլլայ. ուստի ծնողք փոխանակ այս կենսական և կենսատու միջոցն արգիլելու բոլոր ջանիւք զանի մանկանց վրայ գործադրելու են։ Շարժման հետ կապուած է խաղը. ասի մանկան աշխատութիւնն է, ուստի ծնողք և դաստիարակք մանկական խաղերուն նպաստելու են և անոնց նոր, վայելուչ և օգտակար խաղեր սովրեցնելու և պէտք եղած խաղալիքներն հայթայ-

թելու են։ Ասի իւր օգուտներն կը կրկնապատակէ եթէ փոխանակ սենեակի մէջ և գոց տեղերն բացօդեայ և օդասուն տեղեր կատարուի. զի մանկանց համար մաքուր օդն այնքան կարևոր է որքան որ չափահաս անձանց համար։

Շարժման, քաղցի և ծարաւի նկատմամբ որքան որ ծնողք հոգատար պարտին լինել այնքան ալ աւելի նկատողութեան պարտին առնուլ քնոյ բաղձանքը։ Եռամսեայ կամ վեցամսեայ երախան 2 ժամ արթուն կենալէ և կէս ժամ ալ մօրն ստինքն ծծելէ յետոյ 1—3 ժամ քնով կ'անցնէ. այս ալ առանց ժամանակի որոշման, զի այս հասակի մէջ մանկունք գիշերը ցերեկէն չեն կրնար զանազանել, նմանապէս թէ գիշեր և թէ ցերեկ անուն կը վիճուեն։ Ուստի ինչպէս որ մօր և սպասուհեայ պարտքն է իրենց հոգատարութեան յանձնեալ մանկաւոյն կարօտութեանցն յագեցման խնամք և փոյթ տանիլ, այնպէս ալ նոքա նայելու են որ մանկունք քուն զգացած ատեն առանց արգելանաց նոցա սոյն բաղձանքն կատարուի, առանց օրրանի պատրաստելուն սպասելու, զի առողջ մանկունք անկողնոյ վրայ ալ և առանց օրօրուելոյ ալ քնանան, քանի որ հիւանդ երախան օրօրուելով անգամ չէ կարող քընանալ։ Խիստ վտանգաւոր և վնասակար է ամեն մանկանց համար քնացած ատեններն յանկարծ արթնցնել կար վերցնել. ուստի նորա քնացած սենեակը ամեն աղաղակէ և աղմուկէ ազատ պարտի լինել։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՍՊԱՍՈՒՀԻ

Քալելու և խօսելու անկարող եղող մանկունք այլոց օժանդակութեան կը կարօտին որպէս զի մօրն զբաղմանց միջոցին նոքա խնամեն և դարմանեն զանոնք։ Մարք այսպիսի անձ մը ընտրած ատեններն կարծեն թէ բաւական է որ նոքա մարմնապէս առողջ և զօրաւոր ըլլան, որ մանկանց ըստ պատշաճաւոյն խնամք տանին, առանց խորհելոյ թէ սոյն պաշտօնը հաւատարմաբար կատարելոյ համար բարոյական յատկութիւնք եւս հարկաւոր են։ Նաեւ սովորաբար սոյն կարեւոր և փափուկ պաշտօնը չդատարակեալ աղջկանց կը յանձնուի։ Ասի յիմարութիւն մ'է, ուսկից ծագած չարիքներն քիչ չեն. նաեւ անհրաւութիւն է, անխօս մանկունքը, որ իրենց դէմ գործեալ մեղաց և յանձնաց համար գանգատ ու բողոք չեն կարող ընել, այնպիսի սպասուհեայ յանձնել որք իրենց պարտաւորութեանցը բոլորովին անվարժ և անտեղեակ են։ Յիրաւի եթէ խեղճ և մունչ երախայից լեզուին կապերն արձկուէին որքան պիտի բողոքէին իրենց սպասուհեայ չարաչար վարմանցն և անհոգութեանցը դէմ։ Մանկանց սպասուհւոյն տարիքն 20 էն վար և 50 էն վեր լինելու չէ, նա կատարելապէս առողջ ըլլալու է. նորա ատամունք և ատամանց միւսն մաքուր պէտք է ըլլայ. գլխէն մինչեւ ոտքին ծայրի մորթն մա-

քուր և առանց վիրաց պարտի լինիլ, բրտինքը գարշահոտելու չէ, զգայարանք լաւ վիճակի մէջ գտնուելու են։ Նա համբերող, բարեսիրտ և զուարթ պէտք է ըլլայ. մայրենի լեզուն ըստ կարելոյն մաքուր խօսելու է. իսկ եթէ նա փոքր ինչ դաստիարակեալ լինի այլ եւս լաւ, զի կարող լինի մանկական հարցմանց ըստ հարկին պատասխանել։

Երբ մանկունք մեծնան և խօսիլ սկսին, յայնժամ սպասուհիք վախնալով որ նոքա իրենց դէմ բողոք կը բառնան, մինչեւ հիմայ վարած ընթացքին կը փոխեն և այժմ սկսին անբարոյական միջոցներով զանոնք առ ծնողս մատուցանելիք գանգատներէն ետ պահել։ Անոնք ծնողաց արգիլածն մանկանց գործել կուտան, և կ'սպառնան որ եթէ իրենց դէմ որեւէ գանգատ ընելու ըլլան իրենք ալ անոնց չար գործքերն հօրն կամ մօրն իմաց պիտի տան։ Մատաղ մանկունք այսպէս սկսին բարոյապէս թուլանալու։ Ուստի ի՞նչպէս կրնան համարձակիլ այն կանայք մայրական քաղցր անունը իրենց վրայ կրել քանի որ այնպիսի թեթեւամիտ և մտաւորապէս և բարոյապէս անկիրթ և եղծեալ անձանց իրենց մանկանց մարմնական և մտաւորական ինչպէս նաեւ բարոյական զարգացմանց հոգատարութիւնը և խնամակալութիւնը յանձնեն։ Ոչխարաց կամ ձիու համար դարմանիչ անձ մը վարձուած ատեն մարդիկ աւելի բծախնդիր են և աւելի կը հսկեն որ նա իր պաշտօնը անթերի կատարէ, քան թէ իրենց մանկանց համար դարմանիչ մը փնտռած և զանի իրենց մանկանցն խնամակալ կարգած ատեննին։ Ատեն է որ ծնողք ալ սթափին և իրենց առած սխալ քայլերն մէկ մը տեսնելով ուղիղ ճամբուն մէջ շրջին վասն կենաց երախայից։

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԲՆԱԿԱՐԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ ծնողք սպասուհեաց ընտրութեան մասի անհոգ են, նոյնպէս ալ բնակարանի նկատմամբ գրեթէ անկէ աւելի անփոյթ են։ Ամենավատ սենեակներն մանկանց կենաց առաջի տարիներուն կը յատկացնեն. հոն նաև նոցա աղարտեալ հանդերձներն կը չորցնեն։

Այս մասին եղած անհոգութիւնը մանկանց մարմնոյ առողջութեան անթիւ չարիք կը հասցնէ։ Ուստի քանի որ մատաղ երախան իր հանդերձներէն և անկողինէն շարունակ գարշահոտ հոտ մը արձակելով սենեակին օդն թունաւորէ հարկ է որ մանկանց յատկացեալ սենեակը ընդ արձակ, չոր և արեգական ճառագայթից ալ բաց ըլլայ, սակայն փողոցին աղմուկէն ազատ լինելու է։ Այս սենեակը խիստ մաքուր պահելու է, օդն ապականող ամեն բան անմիջապէս անտեղէն հեռացընելու է։ Խիստ վնասակար է մանկանց բնակած և քնացած սենեակին մէջ լաթ չորցնելն. ասով օդը խոնաւ լինի, խոնաւ օդը մանկական կենաց համար սարսափելի թոյն մ'է, որով մանկան

կունք վատառողջ, անզօր և հիւանդոտ լինին և կանուխ գերեզման կը մտնեն։

Ընկերական կենաց գալով յայտնի է որ մէկ տարեկան լինելէ առաջ մանկունք ընկերակցութիւն չեն հասկնար, իսկ երբ այն տարիքն անցնեն և մեծնալ սկսին, յայնժամ այս կամ այն կ'ուզեն տեսնել և լսել. այս կամ այն նիւթն կ'ուզեն ունենալ և քննել։ Յայնժամ բաղձան նաև բնակարանէն դուրս բացօդեայ տեղեր երթալ և հոն եղողներուն մասնակցիլ։ Մանկունք աստիճան առ աստիճան մարդկանց շրջանին և այս կամ այն առարկային վարժելով, նոցա գաղափարներն զարգանան որով մանկական դաստիարակութիւն կ'ստանան։ Մասնաւորապէս մանկանց մտաւոր կենացն վրայ լաւ ազդեցութիւն կ'ընէ երբ անոնք այնպիսի անձանց շրջանին մէջ ժամանակ անցնեն որք հաճոյական կերպով անոնց փափուկ սրտին և մտաց սնունդ կը մատակարարեն։ Այն ընկերակցութիւնք, որ մանկանց օգտակար կրնան ըլլալ, պէտք է ծնողք միշտ սիրով ողջունեն, սակայն մարմնական, մտային և բարոյական միաս պատճառող ընկերակցութիւնք ամենայն խստութեամբ մերժելու և արգիլելու են։ Ծնողք այս մասին ծանր պատասխանատուութեան տակ են զի իրենց մանկանցն մարմնական, մտային և բարոյական կենաց մահուան հարուածն կրնան տուած ըլլալ անփոյթ լինելով, իսկ հոգատարութեամբ և հսկողութեամբ զանոնք իրենց բոլոր կենացն համար երջանիկ կրնան ընել. ուստի արթուն կեցէք և հսկեցէք։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

Մինչեւ ցարդ ծնողաց տուած կենսական կանոնաց ոսկեղէն շղթան աւարտելէ առաջ մանկական հասակին մէջ ստէպ պատահող մի քանի հիւանդութեանց և նոցա դարմաններուն վրայ եւս կուզենք փոքր ինչ տեղեկութիւն տալ որպէս զի գրքոյկս յիրաւի լապտեր մի լինի կենաց ճանապարհին խաւար մասանց մէջ։ Ուստի թող ծնողք իրենց դէմ ելլող սովորական դժուարութեանց ատեն շուարելով յուսահատութեան անդունդն չնետուին այլ խոհեմութեամբ զանոնք յաղթել ջանան։

Ա. ԴԵՂՆՈՏՈՒԹԻՒՆ

Սովորաբար ծննդեան նախնական աւուրց մէջ երբեմն պատահի որ երախային բոլոր մարմինը դեղնագոյն լինի. սոյն հիւանդութիւնը դեղնոտութիւն (սարբլը.ք) կը կոչուի, որ չափահաս անձանց պատահած նոյն օրինակ հիւանդութենէն կը տարբերի, և մանկունք քիչ կը տկարացնէ։ Նոքա սոյն պարագայից մէջ ջերմէ ազատ կելլան, մեզը լոյծ և բաց գոյնով դարձեալ նմանի, իսկ աղբը կանանչ կամ թխագոյն լինի. ասի պատճառ կելլայ որ մանկանց մորթն պաղի։

Հիւանդ մանուկը առաւօտ և երեկոյ Ռէմիւ-
ի 28 աստիճան տաքութեամբ ջրով լուալու է. լուացումը կէս ժամէն աւելի լինելու չէ և մանուկը երեսէն զատ բոլորովին ջրոյ մէջը թաղելու է, լուացումէն ետեւ զանի լաւ չորցնելով միօրինակ ջերմութեան մէջ պահելու է, որպէսզի մորթին ծակոտիքներն բաց մնան, զի պաղելով երբ նոքա վերստին գոցուին լուացումը անօգուտ կըլլայ։ Այս միջոցաւ քանի մ'օրէն հիւանդութիւնը կը բժշկուի, իսկ անհոգութեամբ նա երկարելէ զատ այլ հիւանդութեանց պատճառ կըլլայ։

Բ. ԱՂԱՅ ԲՈՐԲՈՔՈՒՄ

Ասի ալ ընդհանրապէս ծննդեան առաջին աւուրց մէջ պատահի և սովորաբար մէկ մէկ աչքը բորբոքելով անկից միւսին փոխանցի։ Սովորաբար աչաց վերի ծածկոյթն կարմրի և կուռի. ուռեցքն եթէ սաստիկ է աչքն ալ կամ շատ քիչ կը բացուի և կամ գոց կը մնայ և սպիտակագոյն – դեղին հիւթ մը կը վազէ աչքէն ոլորով աչքերն կը փակին և հիւթն ալ կը քարանայ. այս քարացեալ հիւթը ո՛րքան որ աչքը փակէի աչքն ալ ա՛յնքան կը գրգռի, բորբոքումը սաստկանայ և վերջապէս աչաց բիբն ետ բորբոքելով կաւրի և աչքն ալ կուրանայ։ Սորա պատճառն ոմանք լոյսն համարելով նորածնին սենեակը կը խաւարեցնեն, սակայն բուն պատճառը անկողնոյ և սենեակին փոշին է, որ աչաց մէջ մտնելով և հոն մնալով բորբոքման պատճառ լինի նաեւ լուացմանց ատեն անփութութեամբ մորմնոյ աղտոտ ջուրն աչքին մէջ երթալով կը թունաւորէ զանոնք. ուստիկց բորբոքումն ծնանի. կրնայ նաեւ մանկիկն ծիծ կերած ատեն աչք մօրն կուրծքին և հանդերձներուն վրայ այնքան ճնշուիլ որ կը բորբոքին. գտակին եղերքներն նաեւ աչաց քսուելով կը-նան զանոնք բորբոքեցնել. ի վերջոյ տկար աչքին համար գործածուած սպունգը առողջին եւս գործածուելով կրնայ անկ նաեւ բորբոքել։ Ուստի ամեն մայր պարտի բորբոքեալ աչք ունեցող մանկիկը ճարտար բժիշկի մը յանձնել. հիւանդ երախան գիշերը ցերեկ լաւ հսկելու է և աչքէն հոսող հեղուկը փոքրիկ, մաքուր և փափուկ սպունգով մը թեթև ճնշումով մը մաքրուելու է անմիջապէս. սպունգը քանի մը ժամ եռացած և այսպէս զովուած քաղցր ջրոյ մէջ թաթխելով, հեղուկը աչքէն մաքրելն շարունակելու է մինչև որ բժիշկն գալով այլ դեղ մը անօրինէ։

Գ. ԲԵՐՆԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ

Թթու նիւթերով և լուծողական դեղերով նաեւ թանձրաթաններ ուտելէ ետեւ մանկանց կոմի կամ այլ կենդանեաց կաթ տալով անոնց բերանը շարունակ թթու մը արտադրի և լեզուին և բերնի այլ մասանց ներքին մաշկն բորբոքի. ասի փոխանցիկ է և բերնի բորբոքում ունեցող մանկան ծծած ծիծն բերանը առնող առողջ երախան

ևս անկէց կը թունաւորուի։ Ասի թէև վտանգաւոր հիւանդութիւն մը չէ՝ սակայն մանկանց առողջական վիճակին կը խանգարէ և լեզուն շարժած ատեն լաւ զգալով նա դժուարաւ մօրն ստինքն կը ծծէ և կամ բնաւ չուզեր կաթ ուտել։ Ա. յս պատճառաւ սոյն հիւանդութեան ենթակայ եղող մանկունք նիհարանան և մինչև որ չբժշկուին անհնար է որ մարմինը սնանի և գերանայ, ուստի ծնողաց պարտքն է ամենայն խնամով մանկիկն դարմանել և զանի բուժել։

Սորա դարմանը պարզ է. մանուկին ամեն որ թընտարուն կամ ամեն կաթ ուտելէն ետև Թիմեանի (Herba Thymi) թէյէն 3—4 խահվէի դգալ կամաց կամաց խմցնելու է, սակայն թէյն լաւ պատրաստելու է և հեռը շաքար կամ այլ ինչ խառնելու չէ։ Երախան այս հեղուկն չուզեր խմել և դուրս տալ ջանայ որով բերնի ամեն կողմերն անով կողողին. և ճիշդ այս է պահանջեալ պայմանը, որ բորբոքումը բժշկուի, զի որքան որ բորբոքեալ մաշկն սոյն թէյին աղդեցութեան ենթարկի այնքան շուտ բժշկուի բորբոքումը և փշտիկներն չորնալով թափին։ Ա. յս կերպով 8—12 աւուրց մէջ մանկունք այս տաղտկալի բորբոքումէն կ'ազատին առանց որև է նեղութիւն զգալու։ Իսկ անոնք որ մանկանց բորբոքեալ բերանը մատով կամ վրձինով դեղ քսել փորձեն, պատճառ լինին որ բորբոքումը բերնի այլ մասանց ևս փոխանցի։

Ո՞ր երախան բերանը կը բանայ որ հոն այլ և այլ փոշիներ քսեն և ճնշելով ու ճզմելով ցաւ

պատճառեն, մինչև որ բոլոր բերանը արիւն թաթախ լինի. սակայն մարք բռնի նոցա բերանը բանալով սոյն գործողութիւնը կընեն, որով բերնի միս մասերն ևս նման վէրքեր երեւան կելլեն, ճիշդ ինչպէս որ գլխի վէրքերն փրցնելով զանոնք բուժելու տեղ աւելի կը զայրացնեն։ Բերնի բորբոքումն ալ արիւնելէն 24 ժամ ետև աւելի կը զայրանայ և վէրքերն բաղմանան, հիւանդութիւնը երկարի, ամեն անգամի ճնշմամբ մանկունք նեղուին, բորբոքումը շարաւիլ կսկսի և ջերմային նշաններն տեսնուելէ ետև մահը կը յաջորդէ։

Դ. ՎԷՐՔԵՐ

Մանկանց մորթն չափահաս անձանցմէ աւելի փափուկ է, ուստի եթէ երախան թաց կամ աղտոտ հանդերձից մէջ թողուի, նորա մորթին վրայ վէրքեր կը գոյանան, որոնք մանաւանդ ծընընդական գործարանաց և սրնգաց վերին կողմերն կը ճարակին։ Շատ գեր մանկանց մորթին ծալքերն, թեւերն և կուրծքին արկղը վիրաց նիստ լինին, որք երբեմն ալ շարաւ արտադրեն։ Վէրքերու ընդունակ են մանաւանդ այն մանկունք որք խիստ նուրբ մորթով կը ծնին և քիչ կամ հարեւանցի կերպով կը լուացուին։ Ա. յս տեսակ վէրքերն շուտով բուժել ջանալու է, զի եթէ նեղքին մորթն բորբոքի յայնժամ հետեւանքը դէշ կելլայ. ուստի մայրը ամեն օր մանուկը նայած ատեն ամենափոքր վէրքի նշոյլ ան-

գամ նկատած ատեն հետեւեալ դարմանաց ձեռ-
նարկելու է։

Ամբողջ մարմինը արդէն յիշած Թիմեանի
Թէյովն լուալու է, և մարմնոյ կարմրած կամ վի-
րաւորեալ տեղերն յաճախակի սոյն Թէյով Թրը-
ջելու է, և Արաբիոյ խէժին փոշին վիրաց վրայ
ցանելու է։ Շարաւեալ սկսած վիրաց համար 2
մաս Արաբիոյ խէժ և մէկ մաս Քենայի կեղեւն
փոշի ընելով և իրար խառնելով ամեն առաւօտ
և երեկոյ վիրաց վրայ ցանելու է. ասի լաւ դեղ
մ'է։ Վիրաւորեալ մասունք եթէ ուռած լինին
յայնժամ առտու և երեկոյ Թիմեանի Թէյով ու-
ռած անդամք հաճոյական ջերմութեամբ լուալու
է. իսկ երբ մորթն վերքէն կը բաժնուի, դար-
ձեալ ստէպ ստէպ սոյն Թէյովս նոյն մասը Թրջէ։
Զբլայ որ կապարախառն սպեղանիներ գործած-
ուին վիրաց համար, զի նոքա մարմինը ներքուստ
և յարտաքուստ կը Թունաւորեն։

Ե. ՓՍԽԵԼ

Նորածինք երբ առատ կաթով լի ստինքներն
ծծեն և ստամոքսն չափազանց բեռնաւորեն
սովորաբար կը փսխեն, առանց չափահասից նը-
ման նախ սրտի խառնուիլ զգալու, ուստի նաև
փսխելէն ետև առանց զզուանք զգալու հաճու-
թեամբ նորէն ծիծերն ծծելն կը շարունակեն։
Ուստի մարք թողելու չեն որ մանկունք շարու-
նակ ստինքը շտապաւ ծծեն, այլ ասի ընդհատե-
լու են մերթ ընդ մերթ մատը ստինքի տեղ նո-

ցա բերանը դնելով, մանուկն զգալով որ խաբ-
ուած է մատը կը թողու և նորէն ծիծը ծծել
կսկսի. այսպէս շարունակ ծիծը մատին հետ փո-
խելով երախան չափէն աւելի կաթով ստամոքսը
չկրնար ծանրաբեռնել։

Այս անվնաս փսխելէն զատ կը պատահի որ
մանկունք հիւանդանալով ալ փսխել պարտաւո-
ղին. ուստի մարք ասի առաջինին հետ շփոթե-
լու չեն։ Այս վերջինը որ ուղեղի կամ աղիքնե-
րու հիւանդութենէ յառաջ կուգայ մանկական
առողջութիւնը կը խանգարէ, ջերմի նշանները
կերեւին և ծիծը ծծելու հաճոյքը բոլորովին կը
կորսուի։ Այս պարագայիս մէջ հմուտ բժիշկի
մը դիմելու է։

Զ. ԼԱԼ

Լալը մանկանց նրբակազմ մարմինը խստիւ կը
գրգռէ, և եթէ յաճախ պատահի թէև զանոնք
չհիւանդացնէր սակայն զանոնք շատ կը նեղէ։
Մանկանց հանդերձանք եթէ թաց են կամ եթէ
նոքա պաղ են առած՝ կուլան, և երբ թաց հան-
դերձներն փոխուին՝ կը հանդարտին։ Նաև ծիծ
կերած ատեն եթէ չափազանց և միանգամայն
շատ կաթ կուլ տան՝ լան, իսկ երբ փսխեն և ա-
ւելորդն ստամոքսէն արտաքսեն՝ հանդարտին։
Սակայն կրնայ նաև որ և է ցաւ կամ հիւանդու-
թիւն ալ մանկանց աչքերէն արտասուք հանել,
ուստի մօր մը պարտքն է անբաբբառ մանկան
կարօտութիւններն շուտ հասկնալով ըստ այնմ
զանի դարմանել։

Է. ՓՈՐՀԱՐՈՒԹԻՒՆ

Մանկանց սնունդն լոյծ նիւթերէ բաղկացեալ լինելով հարկաւ արտադրեալ աղբն ալ լոյծ լինի, մարք ասի չխորհելով մանկանց ջրային աղբն փորհարութիւն կը համարին։ Մանկունք 24 ժամու մէջ 4–6 անգամ բնական կարիքն կատարեսեն, եթէ ասի նոյն 24 ժամուց մէջ լոկ 1–2 անգամ կատարուի նշան է որ նոցա աղիք անգործ են, ուստիկց անոնց հիւանդութիւնը կրնայ գուշակուիլ։ Հիւանդութեան նշան է նաև երբ երախայական լոյծ աղբը թանձրանայ։ Ուստի 24 ժամուց մէջ 4–6 անգամ աղբի արտաքսումն բնական լինելով փորհարութիւն պէտք չէ համարիլ, իսկ եթէ նոյն ժամանակին մէջ 7–8 անգամ ջրային կանանչագոյն աղբ արտադրի, ասի որոշ վայնի անկարգութեան նշան և բժիշկին օգնութեանը կարօտ է։ Շատ հեղ ալ սրբանի վերքերն փորհարութեան առիթ կրնան ըլլալ, որոյ դարմանը թիմեանի թէյն է. իսկ եթէ վերք աղիքներուն ներքին կողմն են, յայնժամ ապուրի դրդալ մը կտաւատի սերման փոշին 50 տրամ ջրոյ մէջ 10 րոպէ եփելով նորա քաղջ ջրովն դրէխ ընելու է. ասի վիրաց դրդիռն մեղմացնելէ զատ փորհարութեան ալ դարման լինի։ Փոքր մանկանց համար դրէխը կէս լեցնելով մի անգամ եղած գործողութիւնը բաւ է։

Ը. ՄԻ ՔԱՆԻ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ

Որդեծնութեան արարքն մանկանց համար

բուռն գործողութիւն մ'է և անոնց մարմնոյ բաղում վնաս տայ. ասի նորածնին մարմնոյն ուռելէն ևս կերեւայ։ Որդեծնութեան արարքն մանկան համար մահաբեր կրնայ լինիլ. պորտին լարն նոյն գործողութեան միջոցին ձգուելով կրնայ փրթիլ. բուռն ճնշմամբ ոսկորք, մանաւանդ գլխի ոսկորք, կրնան վնասուիլ և կոտրիլ. անդամք այնքան կրնան ոչնչանալ որ արիւնը մորթին տակ 'ի մի վայր կը հաւաքուի, որով մարմնոյ զանազան կողմերն շարաւալից բորբոքումունք երեւան կելլեն. նոյն արարքին ատենը մանկան վիզն, ողնայարն և յօդուածներն ծռուելով տեղերնուն կելլեն, պորտին լարն վիզին կամ մարմնոյ այլ մասանցն խստիւ փաթթուելով (Պատկ. ԺԴ.) զանի շնչասպառ կամ խեղդամ կընէ (Պատկ. ԺԵ.)։ Նաև մաշեցուցիչ ախտէն տանջուող մոր մը երախան նորա թունաւորեալ վերքերով ծածկեալ ծննդական գործարաններէն անցած ատեն սոյն թոյնը իր վրայ կառնու և նոյն ախտը իբր ծննդական օժիտ և ժառանգութիւն հետը կը բերէ։ Ի վերջոյ երախան սաղմնային կեանքէն բաղում թերութեանց կրնայ տիրանալ. օրինակի համար նորա գլուխը և որովայնը ջրոյ հաւաքում մը գոյացած կրնայ լինիլ. երկու կամ աւելի մանկունք կրնան միմեանց յօդեալ լինիլ (Պատկ. ԺԲ.) որով ծնունդական գործողութիւն ևս այնքան դժուարանայ որ վիրաբուժական գործողութեանց կարօտ լինի։ Ա. յոպիսի պարագայից տակ արդանդին մէջ եղող մանկան կենդանի կամ մեռեալ լինելն մաս-

նաւոր գործիքով մը երախային սրտին բաբախումէն կրնայ ստուգուիլ։

Թ. ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆ ԱՆԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Ըստ երեւութին անկենդան են այն երախայք որք ծնելէ ետեւ մեռեալ մարմնոյ նմանին, և կամ կենսական նշանք այն աստիճան ճնշեալ են որ ոչ ըստ պատշաճոյն շնչեն ոչ ալ ձայն հանեն։ Այսի պատճառի դժուար և երկարատեւ որդեծնութենէ և պորտին լարին երախային մարմնոյ զանազան մասանցն փաթթուելէն, և որքան երկար տեւէ այնքան վտանգաւոր լինի։ Եւ որովհետեւ իսկական մեռեալն երեւութականէն որոշելն խիստ դժուար է, պէտք է վերակենդանացուցիչ միջոցք ամէն անկենդան կարծեցեալ մանկանց վրայ փորձել։

Նախ և առաջ պորտին կտրած լարէն ապուրի դգալ մ'արիւն հանելու է ասի ալ լոկ այն մանկանց որոնց բերնին և քթին շուրջը կապոյտ շրջանակ մը կայ։ Եթէ երեսի կարմրութիւնը նուազի, բարի նշան է, իսկ եթէ երեսն դուն նաթափի այնչափ արիւն նորէն պէտք է հոսեցնել, բայց աւելին վնասակար է։ Ընդհանուր կերպով ամէն անկենդան ծնող մանկանց համար 28 աստիճան Ռէմիւրի ջերմութեամբ ջրով լուալու է, մանկիկը ջրոյ մէջ աստ և անդ շարժելու է։ օդին մէջ բարձրացնելու և նորէն ջրոյ մէջ դնելու է. երբեմն ալ կուրծքին վրայ պաղ ջուր, կամ աւելի լաւ, Նաֆթա (Naphtha)

կաթեցնելու է։ Եթէ բերնին կամ քթին շուրջը կապոյտ շրջանակ կայ մանկին գլուխը ջուրէն վեր բարձրացնելու և ձեռքն ալ ստէպ ստէպ պաղ ջրոյ մէջ թաթխելով անոր ճակատը և գլուխը շփելու է։ Երբ մանկին երեսը դեղնած է նորա գլուխը կարելի եղածին չափ ջրով ծածկելու է։

Նաեւ երախային կոկորդին մէջի լորցունքն փոքր մատով մաքրելով բերնին վրայ բարակ լաթ մը ծածկելու է և ներկայ եղողներէն մին բերանը փչելու է որ կուրծքը օդ երթայ, մի և նոյն միջոցին ձախ ձեռքը երախային կուրծքին վրայ դնելու է և եթէ վեր բարձրանայ մեղմ կերպով վար կոխելու է, որով նա արուեստական շնչառութիւն կընէ։ Բացի սոցանէ փետուրով մը մանկիկին քիթը, բերանը և կոկորդը շփելու է որ փռնդտայ կամ փսխէ. նաեւ պարզ ջրով տաք գրեթէ ընելու է, որ աղիքները գործելու դրդիռ ստանան։ Քանի մի փոքրիկ դգալ բաբաթեայի թեթեւ թէյը շատ հեղ կոկորդի լորցունքին կամ կուլ՝ և կամ փսխել տրուելուն առիթ լինի։ Կրնան նաեւ փոքր ինչ քթախոտ մանկան քիթը փչել և նորա սրինքներուն վրայ եղջիւրներ փակցնել։ Այս ամենը հանդարտութեամբ ընելու է և եթէ մի միջոց չյաջողի՝ միւսն փորձելու է։ Առանց ձանձրանալու երկար ժամեր սոյն փորձերն ընելու է։ Եթէ արեան կորուստն է մանկիկին ըստ երեւոյթին անկենդան լինելուն, նա ստինքով, կաթէ պանծերով և դրեխներով զօրացնելու է. իսկ երբ մի քա-

նի ժամուց վերակենդանական փորձերն 'ի թե-
բեւ ելան մանկիկը տաք անկողնոյ մէջ պառկե-
ցնելու է գլուխը փոքր ինչ բարձր դրուք. տաք
լուացումն և միւս միջոցներն կրկնելու է, զի շատ
մանկունք քանի մի ժամ առերեւոյթս անկեն-
դան լինելէ ետեւ նորէն շնչառութիւն ընել ըս-
կսեր են։

Ժ. ԱՆԶՕՐՈՒԹԻՒՆ

Երբեմն նորածինք այնքան տկար և անզօր լի-
նին որ հաղիւ թէ կրնան շարժիլ կամ լայ. եթէ
լան ալ դրեթէ անլսելի հեծեծանք մ'է նա։ Այս
տեսակ երախայք խիստ սակաւ և կամ բնաւ սը-
նունդ չեն առներ, և եթէ բան մ'ալ ուտելու
ըլլան զանի փսխելով նորէն դուրս կարտաքսեն։
Նոցա մարմինը դրեթէ միշտ պաղ է զի 'ի ներ-
քուստ քիչ ջերմութիւն կարտայայտի. նոքա շա-
ղուանակ կը քնանան, երթալով կընիհարանան,
աչքերն պաղած և խորն թաղեալ լինի, և սո-
վորաբար շուտով մեռնին։ Այսպիսի մանկունք
կամ արգանդին մէջ կազմակերպութիւնը կատա-
ղելապէս չեն աւարտած, և կամ պորտին լարէն
արեան շարունակական կորուստ ունին, և կամ
թոքերուն ծակտիքներն խցեալ լինելով շնչառու-
թիւնը արգիլեալ է. Այսպիսի դժբախտ ման-
կունք անմիջապէս հմուտ բժիշկի մը դարմանա-
տարութեանը յանձնուելու են։

Ի. ԲՆԱԿԱՆ ԽՑՄՈՒՆՔ

Ոմանց մանկանց սրբանը կամ միզանցքը կամ
'ի ներքուստ խցեալ է և կամ յարտաքուստ նո-
ցա բնական բացուածքն դոց է և մորթով ծած-
կեալ։ Այսպիսիք վիրաբուժական գործողու-
թեանց պէտք է ենթարկել. սակայն դժբաղդա-
բար գործողութեան պատճառած ցաւին չդիմա-
նալով կեանքերնին նորա զոհ բերեն։

Նա և կը պատահի որ մանկանց աչաց, ա-
կանջին և քթին արտաքին բացուածքներն և
շրթունք միմեանց փակած կամ խցեալ լինին։
Այս տեսակ տարօրինակ դէպքերն եւս ճարտար
բժիշկ—վիրաբուժի մը դարմանին կը կարօտի։

Լ. ԹԵՐԱԿԱԶՄ ԼԵԶՈՒ ԵՒ ԲԵՐԱՆ

Կը պատահի նաեւ որ մանկանց շրթունք քը-
թին ուղղութեամբը ճեղքուած լինին և ճեղքը
բերնին մինչեւ մէջը հասնի։ Լեզուին տակի կա-
պն ալ կրնայ նորա մինչեւ ծայրը հասած ըլլալ
որով մանանին դժուար և խօսքին անկարելի ըլ-
լայ։ Ասոնք ալ վիրաբուժական գործողութեանց
են կարօտ սակայն առաջնոյն բուժումը դրեթէ
անհնար է։

Խ. ՏԱՐՕՐԻՆԱԿ ՄԱՏԵՐ

Ոմանց մանկանց ձեռաց և ոտաց մատերուն
մի քանին երբեմն միմեանց կպչեալ լինին (Պատկ.
ԺԶ.) և կամ բնական թեւէն, այսինքն հինգէն,
աւելի կըլլան (Պատկ. ԺԷ)։ Միմեանց կպչեալ
մատունք թէ և վիրաբուժական գործողութեամբ

բաժնուելու են բայց պէտք չէ արտօրալ, թո-
ղելու է որ երախան փոքր ինչ զօրանայ։ Ա.ւե-
լորդ մատերն եթէ կաղմակերպութեան պակա-
սութիւն մը չունին, լաւ է այնպէս թողուլ,
իսկ եթէ դերակազմ և տարօրինակ են դիւ-
րին է վիրաբուժական գործողութեամբ զանոնք
հեռացնել։

Ե. ՈՒՂԵՂԻ ԵՒ ԱՂԵԱՑ ՊԱՅԹՈՒՄ

Վտանգաւոր հիւանդութեանց մին է նաեւ
ուղեղի պայթումը։ Այս հիւանդութեան մատ-
նեալ մանկին գլխուն ետեւի մասը շրջանակի
բարձր լինի, և նորա ոսկորներէն մէկուն վրայ
ծակ մը և մեծ ցաւ պատճառող ուռ մը կերե-
ւի. (Պատկ. ԺԸ)։ Այս երեքը միթէ չափա-
զանց մեծ չեն խոհեմ դարմանատարութեամբ
շուտով կը բժշկուին, իսկ եթէ մեծ են խիստ
վտանգաւոր լինին, զի եթէ նորա հետ ուղեղի
այլ հիւանդութիւնք եւս ընկերացած լինին մա-
հը անտարակուսելի է։ Ուստի դեռ վտանգը
թեթեւ եղած ատեն հիւանդը ճարտար բժիշ-
կի մը պէտք է յանձնել։

Աղիքներու պայթումն պատահի երբ աղիք
դուրս թափին. (Պատկ. ԺԹ). ասի բնական ու
ստացական կրնայ լինիլ. բնական եղած ատեն
կամ մեռած ծնի երախան և կամ յետոյ մեռնի.
ստացականը, զոր սովորաբար պորտի անկում
կանուանենք, անվտանգ է, երբ ջանք լինի որ
աղիք այլ եւս դուրս չելլեն։ Ուստի դուրս ելած

աղիք ներս քշելէ ետեւ կտաւաթելերէ (շար-
բի, թիֆթիկ) փոքրիկ բարձ մը շինելով աղիք-
ներն դուրս առաջնորդող բացուածքին վրայ դը-
նելէ ետեւ բեթամատի լայնքով խարտանաթուղթ
(եագը) մը անոր և մսին վրայ փակցնելու է, որ
բարձիկն տեղը հաստատ մնայ, մանուկն լուացը-
ուած ատեն սոյն բարձիկն չհանելու համար կը-
տաւաթելը ֆոլոտիոնով օծեալ պարկիկի մը մէջ
կարելու և բացուածքին վրայ կոխելու է որ
փակչի, ասոր վրայ նոյնպէս ֆոլոտիոնով թրը-
ջած լայնկեկ լաթ մը դնելով վրայէն հանգոյցով
մ'ալ մանկին կռնակին վրայ կապելու է։ Այս
ամենը ընելէն ետեւ չըլլայ որ հմուտ բժիշկի
մը դիմելն զանց առնուի։

Կ. ԱՆԿՈՒՄՆ ԱՄՈՐՁԵԱՑ

Ամորձեաց անկումն մանկանց բազում ցաւ կը
պատճառէ, զի ամորձիք պարկին խորն կախուե-
լով, կուռին կը բորբոքին, մանկունք ցաւուն
չդիմանալով կաղաղակեն և ոտքերնին շարունակ
վեր կը քաշեն։ Ցաւն մեղմացնելոյ համար մինչ
'ի գալուստն բժշկի ուռած ամորձեաց վրայ
քաղջ խիւսեր դնելու և քաղջ ջրով ալլուալու է։

Հ. ՍՏԻՆՔՆԵՐՈՒ ԲՈՐԲՈՔՈՒՄ

Մանկանց ուռած և կարծրացած ստինքներն
լուացումէն ետեւ եթէ կակուղ լաթերով առանց
ճնշման չորցուին, և եթէ հանդերձք, մանա-

ւանդ խանձարուբբ, զանոնք չը ճնշեն, նաեւ ա-
նոնց վրայ բամպակ դրուելով եթէ տաք պահ-
ուին, յայնժամ ստինքի բորբոքումը ինքնին
կանցնի, սակայն դեր մանկանց ստինքներու բոր-
բոքումը շուտով շարաւման կանցնի. ուստի ու-
ռեցքին բացուիլն արտորացնելու համար կը-
տաւատի ալիւրի խիւսն շարունակ գործածելու
է իսկ ցաւն մեղմացնելոյ համար ստինքները տաք
ձէթով օծելու է։

Զ. ՄՈՐԹԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ

Մորթի բորբոքումը մանկանց կենաց 4րդ
կամ 6րդ շաբթուն սկսի։ Մորթին վրայ բոր-
բոքման նշաններ կերեւին, քունը անհանգիստ
լինի, մանկիկը կը փսխէ և որովայնի պնդութիւն
կունենայ, բորբոքման նշաններն դիմաց և
ծննդական գործարանաց վրայ ալ սկսին, և
վերջապէս բոլոր մարմինը կը ծածկուի ա-
նոնցմով, ջերմի նշաններ կերեւին, մանկիկը
լայ, նորա աչքերն շրջեալ կամ դարձած կըլլան,
Այսոր պատճառն է անյարմար սնունդն, պաղն
և պորտին լարին վրայի կապին ճնշումն և կամ
հանդերձից կամ խանձարրոյ մէջ երախան սեղ-
մելը։ Ըստ պատշաճոյն պէտք է այս հիւանդու-
թիւնը դարմանել, եթէ ոչ մանկիկը շարաւա-
լից վերքերով կը լեցուի և մահուան ղոհ կեր-
թայ. հիւանդին սնունդն լոկ կաթ ըլլայ. եթէ
մայրը չէ կարող զանի պէտք եղածին պէս սնու-
ցանել առողջ կաթնտու կին մը պէտք է գըտ-

նել։ Հիւանդ երախան մութ, լուիկ և մաքուր
սենեակի մը մէջ պէտք է պահել ուր նաեւ հոտ
լինելու չէ։

Ը. ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՄԷՋԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ

Կը պատահի որ մանկունք կամ բնաւ չեն կըը-
նար միզել, կամ միզած ատեն ցաւ կզգան և
կամ յակամայս, մանաւանդ 'ի գիշերի, կը մի-
զեն։ Առաջինը միզանցքի խցումէ կը պատճա-
ռի, երկրորդին պատճառն է միզանցքի բորբո-
քում կամ վիրաւորում, քար, կծու մէզ, կամ
զանազան հիւանդութիւնք, մանաւանդ ակռայ
հանած ատեն, և կամ մօրն ապառողջ կաթը։
Այս ամենն ալ բժշկի դարմանին կարօտ է. իսկ
գալով վերջին անկարգութեան, այն է յակա-
մայս միզելն. քանի մի կանոններ կուտանք հոս—։
Փետրէ անկողինք այն տեսակ մանկանց համար
չեն։ Հաստ և կարծր և պաղ անկողինք ասոնց
յարմար են, որով միզանօթն չկրնար գրգռիլ,
այլ ընդհակառակն զանի գոցող տուաձգական
բոլորաձև մսանը կը զօրանայ և միզանօթը լաւ
կը գոցուի, զի ճիշդ սորա թոյլութիւնն է յա-
կամայս միզելուն պատճառը։ Այն տեսակ ման-
կունք երեկոյին առատ կամ չափազանց ուտելու
չեն, թէյ, գարեջուր և այլ միզել տուող ըմ-
պելիք խմելու չեն. ամառն ստէպ ստէպ ոտքերն
լուալու է պաղ ջրով, իսկ գիշերն զանոնք միշտ
արթնցնելու է որ ելլեն և միզանօթն պարպեն։

Այսու ամենայնիւ հմուտ բժշկի մը օգնութեանը պէտք է դիմել։

Ճ. ՈՐՈՎԱՑՆԻ ՈՐԴԵՐ

Աղիքներուն մէջ որդ գտնուիլն որոշելն այնքան դժուար է որ շատ բժիշկներ նոցա պատճառած հիւանդութիւնն անգամ տարակուսանաց տակ են ձգած, սակայն կան նշաններ ո՞բոնցմով աղիքներուն մէջ որդ գտնուիլն կրնանք որոշել. ասի բժշկին վերադահելով միայն սա կըսենք որ միայն այն ատեն անտարակոյս և անկասկած կրնանք լինիլ նոցա դոյութեանը վրայ երբ որդնաթափ դեղեր արուելէ ետեւ ամբողջ որդեր կամ նոցա մասունքն թափին։ Թէև այս վիճակիս մէջ գտնուող մանկունքը հմուտ բժշկի մը յանձնուելու են, սակայն եթէ ծնողք կուզեն կրնան ամեն առաւօտ 70 տրամ կաթի մէջ 12–15 լեմոնի կուտ եփելով անօթի փորանց առնոնց խմցնել։ Մի և նոյն ժամանակը պաղ ջրով կամ կաթով եփած սխտորով գրեթէ ընելու է և անոնց կերակրոց դիւրամարսութեանը և ստամոքսին չծանրաբեռնուելուն և աղիքներուն վիճակին նաև բնակութեանը մաքրութեանը զգուշութիւն ընելու է։

Մ. ԿԱՊՈՅՏ ՀԱՋ

Ամեն ծնողք մանկին հազած կերպէն և նորա մանկին վրայ բրած ազդեցութենէն կրնայ որոշել թէ արդեօք երախան կապոյտ հազէն կը տանջուի թէ թեթեւ և անվնաս է նա. ուստի առանց կապոյտ հազն այլ անվնաս հազերէ զանազանող նշաններն ցոյց տալու քանի մի ընտանեկան դարմաններ կը հաղորդենք մի և նոյն ատեն խրատելով բժիշկին հոգատարութեանը դիմելու։

Հազին նախնական վիճակին մէջ մանկիկը տաք պէտք է պահել և քրտնաբեր խմելիքներ տալ։ անոր. զանոնք շարունակ տաք սենեակի մէջ պահելու է և սենեակը արտաքին պաղ օդէն զերծ և ազատ ընելու է։ Մանկունք երբ հազան պառկած տեղէն վեր վերցնելու է և եթէ խուխը (պակամ) ինքնիրեն չարտադրիր մատով զանի բերնէն հեռացնելու է։ Երբ հազը սաստկանայ այս միջոցներն շարունակելէ ետեւ ստամոքսին վրայ մանանեխէ խիւս դնելու և տաք ջրով մարմինը լուալու է։ Իբր հաղի դեղ պէտք է ամեն տան մէջ, ուր մանկունք կան, Սուլթինկ Սիրբբ կոչեալ դեղը պատրաստ գտնուի որ կը վաճառի Ղալաթիա Մինասեանց վաճառատունը։

Յ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Այս հիւանդութեան պատճառն սննդեան անկարգութիւնն է և սովորաբար մանկանց ոսկորներն իրեն աւերման նիւթ կընէ. նա ընդհանրապէս 'ի ծնէ մանկանց կը փոխանցի մաշուղական ախտէն, խոյլէ, յօդուածացաւէ և այլ այս տեսակ հիւանդութիւններէ տանջուող ծը-

նողքներէ։ Անդղիական հիւանդութիւն՝ ունեցող մանկունք մեծ գլուխ և ծերի նման դէմք կունենան, (Պատկ. Ի.) ոսկորք կակուղ լինելով թեւերն ու սրունքներն կը ծռին և ողնայարն ալ կոր կամ սապատող լինի, և գլուխն ուսերուն մէջ տեղն կը մնայ։ Մարմնոյ բոլոր անդամոց և մասանց ոսկորներն եւս այս հիւանդութենէն այնքան կը կակղանան որ խեղճ մանուկը սարսափելի և տարօրինակ ձեւ մը կառնու (Պատկ. ԻԲ.)

Այս հիւանդութիւնը չտարածուելուն համար պէտք է մանկունք բնութեան համաձայն դարմանուին, բնակարանը զոր և առողջ պէտք է լինի, մաքրութեան, ստէպ լուալու է. մայրական ստինքէն պէտք է սնանին, անոր հիւանդութեան միջոցին յայտնի է որ առողջ կաթնտու կնոջ յանձնելու է իր պաշտօնը. կաթէն կտրելու և այլ սնունդ տալու մէջ խիստ զգոյշ լինելու է. մաքուր և բաց օդին մէջ ըստէպ շարժում ընելու են։ Զկան իւղն այս հիւանդութեան բուժմանը համար ամենալաւ միջոցներէն մին է սակայն քանի որ նա մարմնոյ մէջ աւելմունք չեն գործած ճարտար բժիշկի մը դարմանատարութեան յանձնելու է երախան։

Ն. ՇՐՋՈՒՄՆ ՈՏԻՑ ԵՒ ՍՐՆԳԱՑ

Ոտից շրջումը յաճախ արգանդին մէջ կազմակերպութեան մի թերութիւնն է, անի յըղի կանանց որովայնին վրայ քօրսէին և այլ բու-

ռքն ճնշումներէն եւս կը պատճառի. նաև մանկանց քալելու վարժութեանցը մէջ կրնայ պատահիլ։ Երբեմն ալ ոտաց բթամատին եղունգն մեր մէջ մտնելով հոն ցաւ կը պատճառէ, որոյ մանկունք չդիմանալով քոշտի ոտաց եղերքին վրայ կը կոխեն որով բոլոր մարմինին ծանրութիւնը ոտաց վրայ ճնշելով զանի կը շրջէ և ոտքին տակը վեր կը դարձնէ. (Պատկեր ԻԲ.). իսկ երբ ոտքին բթամատին կողմը շարունակ դեռանին հակամտեալ լինի, յայնժամ ոտաց տակի կորութիւնը կորսուելով ոտքը կրունկին և մատերուն վրայ հանդչելու տեղ ոտաց թաթին վրայ և այն ալ քոշտի կը հանդչի որով կամաց կամաց նաև որունդ կը շրջի (Պատկեր ԻԳ)։

Երբ այս տեսակ շրջումներ տեսնուին պէտք է անմիջապէս ոտքին կոտրած կամ շրջած անդամներ դարմանել գիտցող վիրաբուժաց դիմել և ըստ պատշաճոյն զանի կապել տալ. ոտաց լուացմունքներ պէտք է ընել որով ջղերն և մասներն կակղանան և յետոյ ծռած կամ շրջած անդամն շտկել ջանալու է։ Իսկ երբ շրջումն յառաջացած է և տղայք շրջեալ ոտքերով սկսած են քալել, յայնժամ պէտք է ոտքն գիշեր և ցերեկ տեսակ մը մեքենայի մէջ դնել որոյ գործածման վրայ վիրաբոյժն տեղեկութիւն կրնայ տալ։ Ծռած յօդուածին շուրջն մարմարի փոշիէն շինուած խմոր դնելով և մինչև որ չորնայ ոտքը շիտակ դիրքի մէջ բռնելով ևս երբեմն շրջումը կը բուժի։

Մանկական հիւանդութեանց վրայ այսքանս

այժմ բաւական համարելով կը խոստանանք որ եթէ պատեհ առիթ մը գտնանք միայն այս նիւթիս վրայ զատ տետր մի հրատարակելով իրենց զաւակացն բարոյական և մարմնական երջանկութիւնը փնտռող ծնողաց փափաքն յագեցնենք։

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Մինչև ցարդ ըսուածներն աչաց առջև ներկայացնելով պէտք է խոստովանինք որ մարդս յիրաւի հրաշալեաց հրաշալիքն է. հրաշալի է նորա կենաց առաջին գրգիռն ստանալն. հրաշալիք մ'է նորա կազմակերպութիւնը և արգանդի մէջ մնանիլը. աքանչելիք մ'է նորա ծննդեամբ աշխարհի անկախ քաղաքացի մի լինելոյ հրովարտակն ստանալը։ Ո՞վ կը հաւատայ որ նա՛ անօգնական և տկար նորածինը այս աշխարհիս անթիւ փորձանաց և արկածից մէջէն անվնաս և ապահով անցնելով կայտառ երիտասարդ մը կամ առոյգ օրիորդ մը պիտի լինի. ո՞վ կերեւակայէր որ ան տկար տունկը հազարաւոր փոթորիկներ, խոհոգ կներ և մրրիկներ անցնելէ ետև ահագին ծառ[illegible] պիտի ըլլար։ Եւ յիրաւի ասի անկարելի է[illegible] եթէ պարտիզպանը այն տկար ընձիւղին կեանքն և էութիւնը սպառնող թշնամեաց խումբէն զանի չպաշտպանէր. այո՛ հրաշալիք մ'է մեր ամեն մէկերնուս մանկական հասակէն երիտասարդութեան տանող երկար և վտանգաւոր ճանապարհը անվտանգ աւարտած լինելնիս, զի ասի անկարելի պիտի ըլլար եթէ ծնողական և մանաւանդ մայրական այն անձառելի սէրը զմեզ և մեր կեանքն և գոյութիւնը սպառնացող հազարաւոր թշնամեաց ձեռքէն չպաշտպաներ և մեր վրայ չհսկեր։ Հրաշալիք մ'է այս կրսեմ, զի մեր ծնողք այժմեան դարուս նման առաջնորդող գրեանք "Ծնողական Լապտերներ" չունէին այլ ամենայնիւ անօգնական էին թողեալ, ոչ մի կողմանէ ամուսնական և ծնողական կենաց խաւարն լուսաւորելու համար լուսոյ ճառագայթ մը կցոլանար. անոնց վրայ երկինք իր լոյսն ծածկած էր, արեգակն իրենց մութ շաւղին վրայ իր լոյսն չէր սփռեր. անոնք ամուսնական և ծնողական կենաց գիշերուան մէջ կապրէին։ Սակայն այսու ամենայնիւ նոքա այժմեան սերնդեան ծնողքներէն աւելի խնամով և հոգատարութեամբ իրենց զաւակունքը սնուցած և դարմանած են. չե՞ս հաւատար, բաղդատէ այժմեան սերունդիս մարդիկը անցելոյն հետ և պիտի տեսնես սորա ճշմարտութիւնը. պիտի տեսնես որ աշխարհ քանի քաղաքականանա՛յ և մարդիկ քանի լուսաւորուի՛ն այնքան թշուառ լինի ամուսնական վի[illegible]ն, այնքան անհոգ ծնողք, այնքան պար[illegible]անց մարք և այնքան դժբաղդ մանկունք [illegible]ունցմէ յառաջ եղող սերունդք։ Մեր նախահարք առաջնորդաց ձայնէն և Լապտերներուս լոյսէն

զրկեալ լինելով ինքզինքնին և իրենց մանկունքը շարունակ թշնամեաց խումբէն շրջապատեալ տեսնելով ամենայն փոյթով և խնամով իրենց և իրենց մանկանցը կենացը վրայ կը հսկէին, քանի որ այժմ ամուսնացեալք և ծնողք տեսնելով որ առաջնորդաց ձայնը երբեմն կը լսուի և Լապտերը մերթ ընդ մերթ իր լոյսովն նոցա ճանապարհն լուսաւորէ, ձգած են ինքզինքնին, մոռցած են իրենց պարտքը, ուրացած են իրենց զաւակունքը և անհոգ և անփոյթ և անզգուշ կեանք մը կը վարեն 'ի կործանումն իւրեանց և զաւակացն։ Խեղճերն կը կարծեն թէ խրատական էրէոն ծնողական պարտքերն պիտի կատարեն, և էրէոն ազատ պիտի լինին ամենայն անհոգութեամբ և անտարբերութեամբ ամուսնական և ծնողական կենաց պտուղներն վայելելու։ Խաբուած են նոքա, և պէտք է ամենան մեր նախահայրերէն որ այնքան խաւար դարուց մէջ գոնէ դիտցածնուն չափ իրենց պարտաւորութիւններէն չշեղեցան. ապառնի սերունդք միշտ օրհնութեամբ և գովեստիւք անոնց անմահ անունը պիտի յիշեն, իսկ ներկայ անհոգ և անտարբեր սերունդն յիրաւի ապառնի սերնդոց անիծիցը պիտի արժանանայ եթէ շարունակէ ամուսնական և ծնողական պարտուց մէջ տակաւին թոյլ, անփոյթ, անհոգ և անտարբեր գտնուիլ և ապրիլ։

Ուստի առ այս Լապտերն, ո՛վ աղնիւ ծնողք, նա քու ճամբուդ խաւարն պիտի ցրուէ և քու շաւիղդ պիտի լուսաւորէ. նա քու սրբազան պարտաւորութիւններդ քեզի ցոյց պի-

տի տայ. նա քեզի պիտի սովրեցնէ թէ ի՞նչ ընելու ես դու քու զաւակունքդ և քու համայն ընտանիքդ երջանիկ լինելու և ապառնի սերընդեան օրհնութեանցն արժանանալու համար։ Բայց չըլլայ որ կարծես թէ նա էնդէն քու պարտաւորութիւններդ պիտի կատարէ. չըլլայ որ սխալիս. ո՛չ, նա քեզի միայն ուղղեցոյց մը պիտի լինի, իսկ ճանապարհն դուն պէտք է քալես, նա քեզի պիտի հրամայէ և դու պիտի գործադրես նորա պատուէրն։ Եթէ անոր լոյսին հետեւիս յիրաւի երջանիկ պիտի լինիս դու կենաց ամեն կերպ փոփոխութեանցը մէջ, և քու ընտանեացդ շրջանէն ելած ընձիւղն հսկայ կաղնիի նման շատ դարեր քու յիշատակդ աշխարհի մէջ պիտի հռչակէ։



ՄՇՏԱՏԵՒ ՏԱՐԵՑՈՅՑ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ

ՅՈՒՆՎԱՐ 31 ՕՐ			ՓԵՏՐՎԱՐ 28 ՕՐ		
Օր ընդունելութեան	Օր Ա. Շարժման երախայի	Օր Որդեծնութեան	Օր ընդունելութեան	Օր Ա. Շարժման երախայի	Օր Որդեծնութեան
Յունվար	Մայիս	Հոկտեմ.	Փետրվար	Յունիս	Նոյեմ.
1	10	7	1	10	7
2	11	8	2	11	8
3	12	9	3	12	9
4	13	10	4	13	10
5	14	11	5	14	11
6	15	12	6	15	12
7	16	13	7	16	13
8	17	14	8	17	14
9	18	15	9	18	15
10	19	16	10	19	16
11	20	17	11	20	17
12	21	18	12	21	18
13	22	19	13	22	19
14	23	20	14	23	20
15	24	21	15	24	21
16	25	22	16	25	22
17	26	23	17	26	23
18	27	24	18	27	24
19	28	25	19	28	25
20	59	26	20	29	26
21	30	27	21	30	27
22	31	28		Յուլիս	
	Յունիս		22	1	28
23	1	29	23	2	29
24	2	30	24	3	30
25	3	31			Դեկտեմ.
		Նոյեմ.	25	4	1
26	4	1	26	5	2
27	5	2	27	6	3
28	6	3	28	7	4
29	7	4			
30	8	5			
31	9	6			

ՄԱՐՏ ՅԺ ՕՐ			ԱՊՐԻԼ, ՅԹ ՕՐ		
Օր Ընդունելութեան	Օր Ա. Շարժման երախայի	Օր Որդեծնութեան	Օր Ընդունելութեան	Օր Ա. Շարժման երախայի	Օր Որդեծնութեան
Մարտ	Յուշիս	Դեկտեմ.	Ապրիլ	Օգոստոս	Յունվար
1	8	5	1	8	5
2	9	6	2	9	6
3	10	7	3	10	7
4	11	8	4	11	8
5	12	9	5	12	9
6	13	10	6	13	10
7	14	11	7	14	11
8	15	12	8	15	12
9	16	13	9	16	13
10	17	14	10	17	14
11	18	15	11	18	15
12	19	16	12	19	16
13	20	17	13	20	17
14	21	18	14	21	18
15	22	19	15	22	19
16	23	20	16	23	20
17	24	21	17	24	21
18	25	22	18	25	22
19	26	23	19	26	23
20	27	24	20	27	24
21	28	25	21	28	25
22	29	26	22	29	26
23	30	27	23	30	27
24	31	28	24	31	28
	Օգոստոս			Սեպտեմ	
25	1	29	25	1	29
26	2	30	26	2	30
27	3	31	27	3	31
		Յունվար	28		Փետրվար
28	4	1		4	1
29	5	2	29	5	2
30	6	3	30	6	3
31	7	4			

ՄԱՅԻՍ ՅԺ ՕՐ			ՅՈՒՆԻՍ ՅԹ ՕՐ		
Օր Ընդունելութեան	Օր Ա Շարժման երախայի	Օր Որդեծնութեան	Օր Ընդունելութեան	Օր Ա. Շարժման երախայի	Օր Որդեծնութեան
Մայիս	Սեպտեմ.	Փետրվար	Յունիս	Հոկտեմ.	Մարտ
1	7	4	1	8	7
2	8	5	2	9	8
3	9	6	3	10	9
4	10	7	4	11	10
5	11	8	5	12	11
6	12	9	6	13	12
7	13	10	7	14	13
8	14	11	8	15	14
9	15	12	9	16	15
10	16	13	10	17	16
11	17	14	11	18	17
12	18	15	12	19	18
13	19	16	13	20	19
14	20	17	14	21	20
15	21	18	15	22	21
16	22	19	16	23	22
17	23	20	17	24	23
18	24	21	18	25	24
19	25	22	19	26	25
20	26	23	20	27	26
21	27	24	21	28	27
22	28	25	22	29	28
23	29	26	23	30	29
24	30	27	24	31	30
	Հոկտեմ.			Նոյեմ.	
25	1	28	25	1	31
		Մարտ			Ապրիլ
26	2	1	26	2	1
27	3	2	27	3	2
28	4	3	28	4	3
29	5	4	29	5	4
30	6	5	30	6	5
31	7	6			

ՅՈՒԼԻՍ ՅԺ ՕՐ			ՕԳՈՍՏՈՍ ՅԺ ՕՐ		
Օր Ընդունելութեան	Օր Ա. Շարժման երախայի	Օր Որդեծնութեան	Օր Ընդունելութեան	Օր Ա. Շարժման երախայի	Օր Որդեծնութեան
Յուլիս	Նոյեմ.	Դեկտեմ.	Օգոստոս	Դեկտեմ.	Մայիս
1	7	6	1	8	7
2	8	7	2	9	8
3	9	8	3	10	9
4	10	9	4	11	10
5	11	10	5	12	11
6	12	11	6	13	12
7	13	12	7	14	13
8	14	13	8	15	14
9	15	14	9	16	15
10	16	15	10	17	16
11	17	16	11	18	17
12	18	17	12	19	18
13	19	18	13	20	19
14	20	19	14	21	20
15	21	20	15	22	21
16	22	21	16	23	22
17	23	22	17	24	23
18	24	23	18	25	24
19	25	24	19	26	25
20	26	25	20	27	26
21	27	26	21	28	27
22	28	27	22	29	28
23	29	28	23	30	29
24	30	29	24	31	30
	Դեկտեմ.			Յունվար	
25	1	30	25	1	31
		Մայիս			Յունիս
26	2	1	26	2	1
27	3	2	27	3	2
28	4	3	28	4	3
29	5	4	29	5	4
30	6	5	30	6	5
31	7	6	31	7	6

ՍԵՊՏԵՄԲԵՐ ՅՕ ՕՐ			ՀՈԿՏԵՄԲԵՐ ՅԺ ՕՐ		
Օր Ընդունելութեան	Օր Ա. Շարժման երախայի	Օր Որդեծնութեան	Օր Ընդունելութեան	Օր Ա. Շարժման երախայի	Օր Որդեծնութեան
Սեպտեմ.	Յունվար	Յունիս	Հոկտեմ.	Փետրվար	Յուլիս
1	8	7	1	7	7
2	9	8	2	8	8
3	10	9	3	9	9
4	11	10	4	10	10
5	12	11	5	11	11
6	13	12	6	12	12
7	14	13	7	13	13
8	15	14	8	14	14
9	16	15	9	15	15
10	17	16	10	16	16
11	18	17	11	17	17
12	19	18	12	18	18
13	20	19	13	19	19
14	21	20	14	20	20
15	22	21	15	21	21
16	23	22	16	22	22
17	24	23	17	23	23
18	25	24	18	24	24
19	26	25	19	25	25
20	27	26	20	26	26
21	28	27	21	27	27
22	29	28	22	28	28
23	30	29		Մարտ	
24	31	30	23	1	29
	Փետրվար	Յուլիս	24	2	30
25	1	1	25	3	31
26	2	2			Օգոստոս
27	3	3	26	4	1
28	4	4	27	5	2
29	5	5	28	6	3
30	6	6	29	7	4
			30	8	5
			31	9	6

ՆՈՅԵՄԲԵՐ 30 ՕՐ			ԴԵԿՏԵՄԲԵՐ 32 ՕՐ		
Օր ընդունելութեան	Օր Ա. շարժման երախայի	Օր որդեծնութեան	Օր ընդունելութեան	Օր Ա. շարժման երախայի	Օր որդեծնութեան
Նոյեմ.	Մարտ	Օգոստոս	Դեկտեմ.	Ապրիլ	Սեպտեմ.
1	10	7	1	9	6
2	11	8	2	10	7
3	12	9	3	11	8
4	13	10	4	12	9
5	14	11	5	13	10
6	15	12	6	14	11
7	16	13	7	15	12
8	17	14	8	16	13
9	18	15	9	17	14
10	19	16	10	18	15
11	20	17	11	19	16
12	21	18	12	20	17
13	22	19	13	21	18
14	23	20	14	22	19
15	24	21	15	23	20
16	25	22	16	24	21
17	26	23	17	25	22
18	27	24	18	26	23
19	28	25	19	27	24
20	29	26	20	28	25
21	30	27	21	29	26
22	31	28	22	30	27
	Ապրիլ			Մարտ	
23	1	29	23	1	28
24	2	30	24	2	29
25	3	31	25	3	30
		Սեպտեմ.			Հոկտեմ.
26	4	1	26	4	1
27	5	2	27	5	2
28	6	3	28	6	3
29	7	4	29	7	4
30	8	5	30	8	5
			31	6	6

ՏՕՔԹԷՕՐ Մ. Գ. ՏԱՏՐԵԱՆ

ԲԺԻՇԿ, ՎԻՐԱԲՈՅԺ ԵՒ ՄԱՆԿԱԲԱՐՁ

Կէտիք բաշա

ԹԱՏՐՈՆ ՕՍՄԱՆԻԷԻՆ ՏԱԿԸ

Ալի Պէյին թիւ 1 տունը

Վերոյիշեալ Հայազգի բժիշկը արդէն Ամերիկայի և Տաճկաստանի այլ և այլ քաղաքացը մէջ տարիներէ 'ի վեր մեծ յաջողութեամբ բժշկական, վիրաբուժական և մանկաբարձական նուրբ գործողութիւններն կատարած ըլլալով 'ի վերջոյ իր բնակութիւնը Մայրաքաղաքս հաստատեց։

Տօքթէօր Տատրեան էֆէնտին խոստացած է մեզ սոյն գրքոյկս ընթերցող և իրեն դիմող ծընողք և մանկուկք ամենայն հոգատարութեամբ խնամել և դարմանել և զանոնք ամենայնիւ գոհ ընել։

ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ

ԿԱՄ

ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

1874

Օր. Ե. Պաղտասարեան սոյն գրքուկը մեր խընդրանօքը Անգղիարէնէն Թարգմանած է։ Տղայք կամ աղջիկներ, հասարակ ընթերցման սկսելէն ետեւ, եթէ սոյն գրքոյկը կարդալ սկսին մտքերնին ոչ թէ միայն կը մշակուի, այլ նաև բնական գիտութեանց քաղցրութիւնը ճաշակելով բարձրագոյն գիտութեանց կը նախապատրաստուին։ Գրքոյկին նիւթը խիստ օգտակար և հրահանգիչ է և ոճը պարզ։ Այսեն ծնողք որ իրենց զաւակացը ճշմարիտ դաստիարակութեանը բաղձանքը իրենց սրտին մէջ կը կրեն, պէտք է ոչ թէ միայն սոյն գրքոյկս իրենց մանկանցը նուիրեն, այլ եւ բեկոյին անոնց հետ նստած ատեննին զանի միասին կարդան և նիւթը բացատրեն։

Գինն է 2 ղրշ.

Կեդրոնատեղի Նորա Գավաֆեան Գրատուն ի Զագմագճըլար։

ՊԱՏԿ. Ա



ՍԵՐՄՆՈՐԴՔ
Ա. Սերմնորդք Մարդկան.
Բ. Սերմնորդք Արջու.
Գ. Սերմնորդք Մկան.

ՊԱՏԿ· Բ



ԽԱՐԻՍԽ

Ոսկրներէ բաղկացեալ սոյն խարիսխին վրայ զետեղեալ է Արբանդն հանդերձ իրեն պատկանող անդամօք և գործարանօք։

ՊԱՏԿ· Գ



ԱՐԳԱՆԴ

Ա· Արգանդին պատը· Բ· Արգանդին խոռոչը·
Գ· Արգանդին դուռը· Դ· Արգանդին գաւիթը·
Ե· Զուարարք· Զ· Զուանցք·
Է· Արգանդին դիրքը պահող լարերն·

ՊԱՏԿ· Դ·

ՍԱՂՄՆ

Ցղութեան վերջերորդ շաբթուան մէջ սաղմին արտաքին ձեւը։

Հոս գրուած տեղն ճշտորիր միջոցի Հոգեվարք տեսող տոճաձիր գիտուած ի զարդ զտիտղն հաղորդ ասէ։



ԳԼԽՈՒ Գ.

Ցեղաբաղձ գիրքերի զարգացումը ընդ ամենայն Հոգեվարք տեսողաց։

ԿՂՈՒՄՈՒ

ԳԼԽՈՒ Դ.

ՊԱՏԿ. Զ



ԵՐԱԽԱՅԻՆ ԴԻՐՔԸ
Հոս երախայն քողով ծածկեալ է։

ՊԱՏԿ. Ե

ՑՂՈՒԹԵԱՆ Զ. ԵՒ Է. ԱՄԻՍՆԵՐԸ
Հոս քողը բացուած է և երախային արգանդին մէջ ունեցած դիրքը կը ներկայացնէ։

ՊԱՏԿ. Թ.

Ցղութեան գօտի.

ՊԱՏԿ. Ժ.

Երախային դիրքը արգանդին մէջ որդեծննդեան միջոցին.

ՊԱՏԿ· ԺԱ.

Արգանդին մէջ երկոբեկաց դիրքը·

ՊԱՐԿ· ԺԲ

Մարդկային հրեշ մը զոր 25 տարեկան Բրակացի կին մը ծնած է։

ՊԱՐԿ· ԺԳ

Նորածին երախայ պորտին գօտիովը։

ՊԱՏԿ· ԺԴ

Պորտին լարն երախային վիզին փաթթուած։

ՊԱՏԿ· ԺԵ



Պորտին լարին փաթթուելէն պատճառեալ խեղանդամութիւն։

ՊԱՏԿ · ԺԶ

Մէմեանց կպեալ մատեր։

ՀԱՅՍՍՀ-ԱԳՄ ԵՍՍՀ

ՊԱՏԿ · ԺԷ

Վեց մատեայ ձեռք

Վեց մատեայ ոտք ։

ՊԱՏԿ · ԺԸ

Պայթումն ուղեղի

ՊԱՏԿ · ԺԹ

Պայթումն աղիքներու

ՊԱՏԿ · Ի

Անդղիական հիւանդու-
թեան զոհ եղող մանուկ։

ՊԱՏԿ · ԻԱ

Անդղիական հիւանդու-
թեամբ աւերեալ կմախք։

ZUUՈ-ԱԼՄ
Ս. ԳՄ. Ա. ՄԱՏՍԻՆՅԱՆ
ՄՅՍՍՈՒԻՑՅԱՆ ԱՆՎ.

ՊԱՏԿ · ԻԲ ·

Շրջումն ոտաց

ՊԱՏԿ · ԻԳ

Շրջումն սրնգաց

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ

1.	ԵՐԿԱՑՆԱԿԵՑՈՒԹԻՒՆ	1872	Հրատարակեալ
2.	ԳԱՂՏՆԻՔ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ	1872	«
3.	ԱՇՆԱՆ ՏԵՐԵՒՆԵՐ	1873	«
4.	ԱՍՊԱՐ ԿԵՆԱՑ	1873	«
5.	ԼԱՊՏԵՐ ԾՆՈՂԱՑ	1874	«
6.	ՕՐԱՑՈՑՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ	1873	«
7.	« «	1872	«
8.	« «	1874	«
9.	ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ	1872	«
10.	« «	1874	«

ՑԱՆԿ

Յառաջաբան 3
Ընդհանուր տեսութիւն 5
Այր եւ կին 10
Կազմակերպութիւն երախայի 15
Ցղութիւն 20
Կանոնք վասն յղի կանանց 23
Որոշումն ծննդաբերութեան ժամանակի . . . 30
Որդեծնութիւն 32
Մայր եւ մանկիկ 37
Մանկական մարմին 45
Մանկանց նախնական եօթն տարիներն . . . 48
Մանկանց հանդերձներն 53
Շարժում եւ քուն 55
Սպասուհի 57
Բնակարան եւ ընկերակցութիւն 59
Մանկական հիւանդութիւնք 61
Վերջին խօսք 82
Ամուսնական Տարեցոյց 86
Ծանուցմունք 92

1350

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0072730